ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3611 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՓԵՏՐՎԱՐ 1884 — Ն. Տ. 27 ՓԵՏՐՎԱՐ

ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գին կ. Պոլսոյ համար 10 Մէճիտ
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » կ. Պոլսոյ » 5 1/2 »
» » Գաւառաց » 6 1/2 »
Եռամսեայ » կ. Պոլսոյ » 3 »
Օտար թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա
Յանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ.
Երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ տակաւրկութիւն կը մնայ

# ՄԱՄՈՒ

## ԼՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱԶ — ՀԱՆԱՊԱՀԱՍՕՐԵԱՅ — 40 ՓԱՐԱԶ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր Տօրէնին պիտի ուղղուի կ. Պոլիս Բիզա փաշա հոգուը, Շարգ Զարշըսը թիւ 37 Մասիսի դրատնեակը։

Ճամբու ծախքը չնշանակուած նամակ չընդունուիր։

Չգրաւած նամակ, յղուած, եւայլն ետ չեն տրուիր։

Կ. ՊՈԼԻՍ 15 ՓԵՏՐՎԱՐ

## ԽԱՓԹ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ Շքոտրայի մաքսատանց վերատեսուչ Ալի Ռիզա էֆէնտի՝ կարնոյ մաքսատանց վերատեսուչ անուանեցաւ։

Վեհ. Սուլթանն Գ. կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեց Կարնոյ կաթոլիկ Հայոց առաջնորդ Դեր. Հ. Յակոբեանի։

Աւստրիական դեսպան Պ. Քալիչ երէկ վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ։

Այս առաւօտեան Թուրքերէն լրագիրք կը ծանուցանեն թէ Սեբաստիոյ կուսակալ Խալիլ Ռիֆաթ փաշա Կերիտի կուսակալ անուանած է կայսերական հրամանաւ։ Ն. Վսեմութիւնն հեռագրաւ մայրաքաղաքս կոչուած է։

Արտաքին գործոց նախարար Բարձր. Արիֆի փաշա, իւր երկրատեւ հիւանդութենէն բոլորովին ապաքինած լինելով, երկուշաբթի օրը կայսերական պալատը գնաց իւր երախտագիտութիւնն յայտնելու վեհ. Սուլթանին, որ չդադրեցաւ իւր բարեսէր հոգածութիւնը ցոյց տալէ Ն. Բարձրութեան հիւանդութեան միջոցին։ Արիֆի փաշա երէկ ալ Բ. Դուռն երթալով իւր կարեւոր պաշտօնը վերսկսաւ, զոր իւր խորհրդականն՝ Վսեմ. Տատեան Յարութիւն էֆ. այնքան յաջողութեամբ և ճարտարութեամբ վարած էր իբրև առժամեայ փոխանորդ։

Վեհ. Սուլթանին բժշկապետ Վսեմ. Մավրոյէնի փաշա, որ քանի մը տարիներէ ի վեր այրիացեալ էր, երկուշաբթի օրը Գատը-գիւղի մէջ ամուսնացաւ Լաֆոն պարոնուհւոյն հետ, որ նախ Գատը-գիւղի յունական եկեղեցւոյն մէջ մկրտուեցաւ ըստ յունական ծիսի։ Այս արարողութենէն յետոյ ամուսնացեալք և հրաւիրելոց բազմութիւնը, Միսաքեան Պետրոս էֆէնտիին տունը գնացին, ուր կատարեցաւ պսակի արարողութիւնը, ձեռամբ Քաղկեդոնի արքեպիսկոպոսին։ Սակայն փաշա կնքահայր եղաւ։ հրաւիրելոց մէջ բազմաթիւ պալատական պաշտօնատարք և բարձրաստիճան անձինք կը գտնուէին։

Թայմզ լրագրին կ. Պոլսոյ հանրածանօթ թղթակիցն՝ Պ. Մաքէնզի Ռալէյ, որ ժամանակէ մ'իվեր Անգլիա կը գտնուէր հրաժեշտով, երկուշաբթի օրը Վառնայի թղթաբերով մայրաքաղաքս վերադարձաւ։

Դիւանագիտական ակմբոց մէջ զրոյց կը պտտի թէ Ռուսական դեսպան Պ. Տը Նէլիտոֆ քիչ օրէն ուրիշ պաշտօնի պիտի կոչուի իւր կառավարութեան կողմէ։ Թէհրանի նախկին Ռուսական դեսպան Պ. Զինովիէվ, որ արտաքին գործոց Նախարարութեան ասիական ճիւղին տնօրէնն է այժմ, կ. Պոլսոյ Ռուսական դեսպան պիտի անուանի եղեր։

Թերճէմանի Հագիգաթ կը ծանուցանէ թէ քաղաքապետ Մազհար փաշա Գարթալի շրջակայքերն ասպատակող աւազակախմբերը ջնջելու համար ազդու միջոցներ ձեռք առեր է։

Զմիւռնիայէն փետր. 25 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ նը-պաստամատոյց մասնախմբին անդամներն իբր 7,500 մարդոց դրամական օգնութիւններ և զգեստներ բաշխելէ յետոյ՝ Զմիւռնիա վերադարձեր են։ Կայսերական Բռմիսիոնը Սիւլէյման պէյ այժմ հրամանի կ'սպասէ կ. Պոլիս վերադառնալու համար։

Ճերմանիէն—Հալատիս կ'իմանայ թէ կայսերական կառավարութիւնը շոգենաւ մը դրեր է Թենալիոյ խալամ բնակչաց տրամադրութեան ներքեւ։ որը Փոքր-Ասիա գաղթել կը բաղձան։

Իսդբրն էքսբրէս կը ծանուցանէ թէ Տիպրէէն Ալպանիական պատգամաւորութիւն մ'եկած է մայրաքաղաքս, խնդրելու համար վեհ. Սուլթանէն, որ իրենց գաւառակը կուսակալութեան վերածէ և կուսակալ ալ Ալպանիական ցեղէ անուանէ։

Աւստրիական Վորշթատ ցայթունկ լրագիրը կը ծանուցանէ թէ Խարդումի Աւստրօ-Հունգարական հիւպատոսն 2000 ոսկի փրկանք ղրկեր է Մէհտիին, որպէս զի արձակէ կաթոլիկ միսիոնարները, զորս գերի բռնած էր։

Ֆրանսական կառավարութիւնը ժամանակէ մ'ի վեր Պերութի մէջ բժշկական վարժարան մը հիմնած է։ որոյ աշակերտք ուսանելու չըբնանն աւարտելէ յետոյ՝ Տոքթէօրի վկայական պիտի ստանան։ Կայսերական կառավարութիւնն, որ երկար տարիներէ ի վեր Օսմ. հողին վրայ բժշկական վարժարաններ ունի, կը կարծէ թէ ոչ մէկ տերութիւն իրաւունք ունի բժշկական վարժարաններ բանալու ի Թուրքիա և բժիշկի վկայականներ յանձնելու։ Եթէ Մոնիթէոր Օրիանթալի տեղեկութիւնք ճիշդ են, Բ. Դուռն։ կայսերական բժշկական վարժարանին խնդրանաց, ծանուցագիր մ'ուղղելով Ֆրանսական դեսպանին՝ ուշադրութիւն հրաւիրեր է յիշեալ բժշկական վարժարանին վրայ, որոյ դոյութիւնն անհայտելի է Տերութեան վեհապետական իրաւանց հետ։ Դեռ յայտնի չէ թէ Ֆրանսական դեսպանն ինչ պատասխան տուած է։

Բաղէշի կուսակալ Հիլմի փաշայի վախճանումէն ի վեր, այդ կարեւոր նահանգն առանց կուսակալի կը մնայ։ Բ. Դուռը դեռ այս մասին որ և է որոշում չէ ըրած։

Վեհ. Սուլթանին բարձր հովանաւորութեան ներքեւ կազմեալ նպաստամատոյց բարձր ցանձնախումբն իւր աշխատութիւններն աւարտեց, 5,000 Օսմ. ոսկւոյ գումար մը բաշխելէ յետոյ խասգիւղի հրկիզելոց։

Թոգար բերդաքաղաքն եւս, որուն օգնութեան պիտի երթային Անգլիական զօրքերը, վերջապէս Սուտանի ապստամբաց ձեռքն ինկած է։ Այս քաղաքին գրաւման և Սուտանի խնդրոյն վրայ ընդարձակ տեղեկութիւններ տրուած են մեր այս աւուր քաղաքական տեսութեան մէջ։

Պատերազմական գործոց Նախարարութիւնը շաբթուս մայրաքաղաքիս հրապարակին վրայ մեծ քանակութեամբ ուտեստի վերաբերեալ նիւթեր գնեց, ի մէջ այլոց 4,000 պարկ բրինձ, քանի մը հազար պարկ պաքսիմաթ և մաս մ'աղ

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ նը-պաստամատոյց մասնախմբին անդամներն իբր 7,500 մարդոց դրամական օգնութիւններ և զգեստներ բաշխելէ յետոյ՝ Զմիւռնիա վերադարձեր են։ Կայսերական Բռմիսիոնը Սիւլէյման պէյ այժմ հրամանի կ'սպասէ կ. Պոլիս վերադառնալու համար։

Ճերմանիէն—Հալատիս կ'իմանայ թէ կայսերական կառավարութիւնը շոգենաւ մը դրեր է Թենալիոյ խալամ բնակչաց տրամադրութեան ներքեւ։ որը Փոքր-Ասիա գաղթել կը բաղձան։

Իսդբրն էքսբրէս կը ծանուցանէ թէ Տիպրէէն Ալպանիական պատգամաւորութիւն մ'եկած է մայրաքաղաքս, խնդրելու համար վեհ. Սուլթանէն, որ իրենց գաւառակը կուսակալութեան վերածէ և կուսակալ ալ Ալպանիական ցեղէ անուանէ։

Աւստրիական Վորշթատ ցայթունկ լրագիրը կը ծանուցանէ թէ Խարդումի Աւստրօ-Հունգարական հիւպատոսն 2000 ոսկի փրկանք ղրկեր է Մէհտիին, որպէս զի արձակէ կաթոլիկ միսիոնարները, զորս գերի բռնած էր։

Ֆրանսական կառավարութիւնը ժամանակէ մ'ի վեր Պերութի մէջ բժշկական վարժարան մը հիմնած է։ որոյ աշակերտք ուսանելու չըբնանն աւարտելէ յետոյ՝ Տոքթէօրի վկայական պիտի ստանան։ Կայսերական կառավարութիւնն, որ երկար տարիներէ ի վեր Օսմ. հողին վրայ բժշկական վարժարաններ ունի, կը կարծէ թէ ոչ մէկ տերութիւն իրաւունք ունի բժշկական վարժարաններ բանալու ի Թուրքիա և բժիշկի վկայականներ յանձնելու։ Եթէ Մոնիթէոր Օրիանթալի տեղեկութիւնք ճիշդ են, Բ. Դուռն։ կայսերական բժշկական վարժարանին խնդրանաց, ծանուցագիր մ'ուղղելով Ֆրանսական դեսպանին՝ ուշադրութիւն հրաւիրեր է յիշեալ բժշկական վարժարանին վրայ, որոյ դոյութիւնն անհայտելի է Տերութեան վեհապետական իրաւանց հետ։ Դեռ յայտնի չէ թէ Ֆրանսական դեսպանն ինչ պատասխան տուած է։

Բաղէշի կուսակալ Հիլմի փաշայի վախճանումէն ի վեր, այդ կարեւոր նահանգն առանց կուսակալի կը մնայ։ Բ. Դուռը դեռ այս մասին որ և է որոշում չէ ըրած։

Վեհ. Սուլթանին բարձր հովանաւորութեան ներքեւ կազմեալ նպաստամատոյց բարձր ցանձնախումբն իւր աշխատութիւններն աւարտեց, 5,000 Օսմ. ոսկւոյ գումար մը բաշխելէ յետոյ խասգիւղի հրկիզելոց։

Թոգար բերդաքաղաքն եւս, որուն օգնութեան պիտի երթային Անգլիական զօրքերը, վերջապէս Սուտանի ապստամբաց ձեռքն ինկած է։ Այս քաղաքին գրաւման և Սուտանի խնդրոյն վրայ ընդարձակ տեղեկութիւններ տրուած են մեր այս աւուր քաղաքական տեսութեան մէջ։

Պատերազմական գործոց Նախարարութիւնը շաբթուս մայրաքաղաքիս հրապարակին վրայ մեծ քանակութեամբ ուտեստի վերաբերեալ նիւթեր գնեց, ի մէջ այլոց 4,000 պարկ բրինձ, քանի մը հազար պարկ պաքսիմաթ և մաս մ'աղ

Կարագ։ կը կարծուի թէ ասոնք Հիճազի Օսմ. զօրաց պիտի ղրկուին։

Ոստիկանութիւնը Մեծ Կղզւոյն մէջ Եորտամ անուն մարդ մը ձերբակալեց, որ դրամարկղ կոտրելու արհեստին մէջ մեծ համբաւ հանած գող մ'էր։

Պէրլինէն կը հեռագրեն առ Մորնինկ Բոսթ. «անհիմն է այն լուրը թէ Գերմանիա յորդորած է Անգլիա, որպէս զի իւր թեւարկութեան ներքեւ առնու ղեգիպտոս։ Տերութիւնք առաջ թէ յետոյ, մի և նոյն զգուշական ընթացքը կը բռնեն Եգիպտոսի գործոց մէջ»։

Օսմ. կայս. Պանքային մասնաճիւղերուն ընդհ. քննիչ Պ. Շմից ընդունած է Եգիպտոսի մաքսատանց երկրորդ տնօրէնի պաշտօնն, տարեկան 1,400 եգիպտական ոսկի թոշակաւ։

Զմիւռնիոյ կուսակալ Հաճի Նաշիտ փաշա հեռագրած է Ներքին գործոց նախարարութեան թէ վարչական պտոյտ մ'ընելու ձեռնարկած է իւր իրաւասութեան ներքեւ գտնուած նահանգին մէջ, անձամբ տեսնելու համար վրանաբնակ ցեղերու զետեղումն։ Ն. Վսեմութիւնը կը յարէ թէ Օսմ. իշխանութեանց ջանիւք, 10,000էն աւելի վրանաբնակներ արդէն իրենց թափառական կեանքը թողով իրենց ցոյց տրուած տեղերը զետեղուած են վերջնապէս։

Տիարպէքիրի բանտը գտնուող չարագործք՝ փախչելու մտօք՝ ըստորերկրեայ ուղի մը բացեր են, բայց բանտապահը ժամանակին իրազէկ լինելով, արգիլեր և ստորերկրեայ ճանբան գոցեր են։

Բէյրութի ընկերութեան ծխախոտի գործարանն յառաջիկայ մարտ 1էն պիտի սկսի բանիլ և ընկերութիւնն ապրիլ 2ին ի վաճառ պիտի հանէ իւր պատրաստելիք ապրանքը։

Այս տարի կայսերական քաղաքային վարժարանէն ելնող ուսումնաւարտ աշակերտաց 5 ը գաւառակաց կառավարիչ անուանած և 3 ն արտաքին գործոց նախարարութեան և Պետական խորհրդոյ դիւանատանց մէջ պաշտօններ ստացած են։

Իսկ մնացեալք՝ եօթն ամիսներէ ի վեր անգործ կը թափառին և երէկ աղերսագիր մը մատուցին Մեծ-Եպարքոս Բարձր. Սայիտ փաշայի, որ անմիջապէս հանրային կրթական նախարարութեան նկատառման յանձնեց զայն։

Կ. Պոլսէն փետր. 20 թուով քաշուած հեռագիր մը կ'ըսէ. «կը հաւատան թէ Լոնտրայի Օսմ. դեսպան Միւղիւրիւս փաշա առ Բ. Դուռն ուղղած տեղեկագրով մը առաջարկած է արտասովոր պատուիրակ մը ղրկել յեգիպտոս, ինչպէս նաեւ ի հարկին Օսմ. զօրք, որոց ծախքը հոգացուի Եգիպտական կառավարութեան կողմէ։ Այս զօրքերը պէտք է գրաւեն ծովեզերեայ մի քանի կէտեր, ինչպէս Տիմեաթ և Սուէշ, պայմանաւ որ Անգլիական զօրքերը մեկնին Եգիպտոսէն, ուր նոցա ներկայութիւնը պէտք է Սուտանի դէպքերուն նախապատճառն համարուի։ Միւղիւրիւս փաշա չէ յաջողած իմանալ Եգիպտոսի նկատմամբ Անգլիոյ վերջնական դիտաւորութիւնները»։

Լոնտրայէն փետր. 21 թուով կը հեռագրեն թէ արտաքին գործոց նախարարի խորհրդական Լորտ Ֆիձ-Մորիս ծանուցեր է երեսփոխանական ժողովոյ մէջ թէ Լորտ Տըֆրին ազդուապէս յանձնարարեր է Բ. Դրան, որպէս զի բարեկամաբար և փութապէս կարգադրէ Ցունաց Պատրիարքարանի հետ ծագած խնդիրը։

Գահիրէէն փետր. 20 թուով կը հեռագրեն. «Ալասիկ կորտոն զօրավարին յայտարարութեան բնագրին այն մասն, որ գերեվաճառին կը վերաբերի.

«կը փափաքիմ ձեր երջանկութիւնն ու անդորրութիւնը վերահաստատել։ Գիտեմ թէ շատ վշտացած էք գերեվաճառին բարձման պատճառաւ, որ ամենախիստ պատիժներով արգիլուած է։

«Որոշած եմ թոյլատրել այս առեւտուրն և հրաման տուած եմ մունետիկներուն՝ հրատարակել այս որոշումն, որպէս զի ոչ ոք կարենայ արգելուլ անոր գործադրումը։

«Ինձ որ ազատին, սպասաւորեն. ունին, կրնան իրենց սեփականութիւնն համարել և իրենց ուզածին պէս վաճառել զանոնք։»

Կ'ըսուի սակայն թէ այս բնագիր անճիշդ է։

Յայտնի է թէ Թայմզ լրագրոյ Փարիզի թղթակից Պ. տը Պլովից [illegible] էր այն ուղեւորութեան վրայ, զոր վերջին օրերս ըրած էր կ. Պոլսոյ մէջ։ Այս գիրքն կը պարունակէ ոչ միայն մտացածին և սխալ քննադատութիւններ ու տեղեկութիւններ, այլ և անվայել հատուածներ, որք բնաւ չեն յարմարիր այն գրեթէ կէս-պաշտօնական սիրալիր ընդունելութեան, զոր վայելեց աստ։ Բարձրագոյն հրամանաւ, այս գրքին վաճառումն արգիլուած է Թուրքիոյ մէջ։ Հետեւապէս, մայրաքաղաքիս օտար գրավաճառաց ազդարարուած է, որպէս զի այս գիրքը վաճառելէ զգուշանան։

## ՀԵՌԱԳՐԵՐ

Աթէնք 25 փետր.

Այս գիշեր հրդեհ մը ծագելով՝ վերան գոց չուկային մէկ մասն այրեցաւ։

Թագաւորն եւ թագուհին այսօր Աթէնքէն մեկնեցան Կորնթոսի պարանոցին պեղման աշխատութիւններն աչքէ անցուցնելու համար։

Պէրլին 25 փետր.

Բեղրսպուրկէն եկած տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ սպառնական նամակ մը ղրկուեր է Կոնստանդին մեծ դքսին, եւ թէ նամակին հեղինակը ձերբակալուեր է։

Քանի մը ռուսական լրագիրք կը յանձնարարեն որ Կեդրոնական Ասիոյ երկաթուղեաց շինութիւնն շարունակուի մինչեւ ի Դպլուլ (մայրաքաղաք Աֆղանստանայ) Աբքապատէն եւ Սէրախէն անցնելով։

Նախարարական Բոսթ լրագիրն՝ իւր այս աւուր թուով՝ կ'ըսէ. — «Կը կարծենք գիտնալ թէ Ռուսիա՝ Մէրվէն անդին չյառաջանալու բացորոշ խոսում տուած է Անգլիոյ»։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Լոնտրա 26 փետր.

Բեղրսպուրկէն կը գրեն առ Թայմզ. — «Ռուսական զօրաց ընդհ. հրամանատար եւ Թուրքաստանի կուսակալ Զէրնայէֆ զօրավարն եւ կանչուեցաւ եւ Իկնաթիէվ զօրավարն անոր յաջորդեց։ Զէրնայէֆ զօրավարին պաշտօնանկութիւնն պատճառը սա է թէ Հնդկաստան արշաւելու յատակագծեր կ'առաջարկէր անդադար, հակառակ այն տեսութեան, զոր այս մասին կ'ղդար Զարը։»

Պ. Բիլ նախագահ անուանեցաւ Երեսփ. ժողովոյ, փոխանակ Պ. Հ. Պրանտի, որ հրաժարեցաւ։

Բեղրսպուրկ 26 փետր

Բեղրսպուրկի Ժուրնալն իւր այս աւուր թուով կը ծանուցանէ թէ Պարսից շահն հեռագիր մ'ուղղելով Ռուսիոյ կայսեր՝ իւր խնդակցութիւնն յայտներ է Մէրվի գրաւման համար։ Կը հաւատան թէ կայսրը Վարչաւոյ մէջ կալուածական վարկի մը հաստատման արտօնութիւն պիտի տայ։ Միջոցներ ձեռք պիտի առնուին թուրքաստանի մէջ ափիոնի վաճառումն արգիլելու համար։

Բեղրսպուրկ 27 փետր.

Բեղրսպուրկի Ժուրնալն իւր այս աւուր թուով կը ծանուցանէ թէ Էրթրթի նախորդ կառավարիչ Էյուպ խան այժմ պետական բանտարկեալ մ'է Մէշտի մէջ, եւ թէ սուտ են այն զրոյցները թէ նա Ռուսիոյ կողմէ պաշտօն ստացած է Աֆղանստանի մէջ յուզում մը յառաջ բերելու համար։

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Վարչութեան Բաղ. Ժողովոյ առենապետ Մաքսուտեան Վսեմ. Սիմոն պէյի տօնախմբութիւնը լինելով, Ամեն. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Եսայի Սրբազանն և Պատրիարքական փոխանորդ Հայրը երէկ շնորհաւորութեան գնացին Ն. Վսեմութեան։

Ուսումնական խորհուրդը թէպէտ ի նիստ հրաւիրուած էր, սակայն առենապետ Մէզպուրեան Մկրտիչ էֆէնտին միայն ներկայ գտնուելով, ինչ ինչ ընթացիկ [illegible]

Տնտեսական խորհրդոյ անդամ Սարաֆեան Միքայէլ էֆէնտի վերջապէս յաջողեր է 5 անդամէ առաժամեայ թաղ. խորհուրդ մը կազմել Գուրուչէշմէի, Արնաւուտ գիւղի և Պէպէքի միացեալ թաղից համար։ Աւասիկ թաղ. խորհրդականաց անունքն.

Գրիգոր էֆ. Գարագաշեան.
Կարապետ » Շամտանճեան.
Մատթէոս » Մաթիոսեան.
Յովհաննէս » Թուղլաճեան.
Սարգիս » Նոհրատեան։

Ընտրութեան տեղեկագիրն այսօր Քաղաքական Ժողովոյ պիտի ներկայացուի ի վաւերացումն։

Հրաժարեալ Կրօնական Ժողովոյ առենապետ և Եէնի գաբուի թաղին քարոզիչ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Մինթանճեան, որ ժամանակէ մ'ի վեր հիւանդ էր, երկուշաբթի գիշեր վախճանելով, մարմինն երէկ խասգիւղի եկեղեցին փոխադրեցաւ։ Օծման արարողութիւնն և յուղարկաւորութեան հանդէսն այսօր պիտի կատարին։

Հանգուցեալն՝ Յակոբոս Պատրիարքէն վարդապետ և Մատթէոս կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուած էր։ Երզնկայի մէջ կարճ և Բաբերդի մէջ երկար ժամանակ առաջնորդական պաշտօն վարած և երկիցս կրօնական ժողովոյ անդամ եղած է ի կ. Պոլիս։

Դիտելի է թէ Էջմիածնի Կաթողիկոսական ընտրելեաց ցանկին պատրաստութենէն ի վեր, երեք եպիսկոպոսք հետզհետէ վախճանած են, որք են՝ Գրիգորիս եպիսկոպոս Մինթանճեան, Մատթէոս եպիսկոպոս Նազարեան և Յարութիւն եպիսկոպոս Տէօվլէթեան։

Ազգ. Վարչութիւնը շրջաբերական մը ղրկելով առ համայն վանահարս՝ պահանջած է որ 1883-1884 տարւոյ եկամտացոյցները ղրկեն և վանօրէից վիճակը տեղեկագրեն ընդ փոյթ։

Կամախէն կը գրեն մեզ թէ Մեծ-Արմատն գիւղին աւագերէց Տ. Յակոբ քահանայ գրգռիչ քարոզ մը խօսելով, ժողովուրդը կը յուզուի, եկեղեցւոյն աթոռակալն և Ահարոն անուն անձ մը ուրիշներ ձայն կը հանեն թէ չվայելը այդպիսի հակաժողովրդական քարոզ մը խօսիլ եկեղեցւոյ բեմէն։ Յիշեալ քահանային եղբայրը՝ Տէրի Միսաք անուն՝ և այլ համախոհք կը հակառակին. խռովութիւնը տակաւ առ տակաւ կը մեծնայ և Գայմագամը հասնելով կը միջամտէ և կը յաջողի առժամապէս խաղաղել յուզեալ ժողովուրդը։ Բայց քանի մ'օրէն յետոյ, Ահարոն իւր տան մէջ կ'սպանուի հրազէնի երեք հարուածով, որք պատուհանէն ներս արձակուեր են։ Կառավարութիւնը ձերբակալութիւններ ըրեր և իբրև կասկածելի 25 մարդ ձերբակալեր և բանտարկեր է, որոց մէջ կը գտնուի Տ. Յակոբին եղբայրը Տէրի Միսաք։

Դարձեալ կամախէն կը գրեն մեզ թէ Երզնկայի առաջնորդ Գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան առաջնորդական տուրք (պտղի) կը հաւաքէ եղեր կամախի քանի մը գիւղերէն։ Ժողովուրդն այս առթիւ բաւական յուզուեր է կարծելով թէ իրենց թեմը Պատրիարքարանի կողմէ միացած է Երզնկայի հետ, առանց իրենց իմաց տուուելու։

Գեր. Հմայեակ Որբաքանչ [illegible] բողութիւն մը։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Թոփալեան Գէորգ էֆէնտիի հայրն՝ կարապետ էֆ. Թոփալեան, որ Գաղատիայէն հեռագրեր է իւրոյ Փորթուգալեան Մկրտիչ էֆէնտիի, որ 10 ոսկւոյ փոխանակագիր մը քաշէ Պոլիս իւր որդւոյն վրայ։ Յիշեալ փոխանակագիրը քաշուած և աստ վճարուած է Ալի փաշա խանի սենեկապետ Նաթանեան Յարութիւն աղայի։ Թոփալեան կարապետ էֆէնտիի այս մարդասիրական գործն ընդհանուր շնորհակալեաց արժանի է։

Գծագրիչ Պ. Յարութիւն Ճիվանեան կ'փափաքի ձրի ուսուցանել գծագրութիւն քանի մը ճիւղերովն, ազգային ա՛յն հաստատութեանց՝ որ անձնուիրաբար կրթութիւն ծաւալելու նպատակ ունին։ Ան Պ. Ճիվանեան ուզղելի գրերն պէտք է ղրկել Պէշիկթաշի ազգային եկեղեցին։

Յառաջիկայ շաբաթ գիշեր, փետր. 18, Բերայի Նորայէն թատրոնին մէջ մեծ պարահանդէս մը պիտի տրուի ընդ հովանաւորութեամբ Իսպանիական Վսեմ. դեսպան Ռաքօն կոմսին և ի նպաստ մեր կաթոլիկ ազգայնոց. Ս. Յակոբայ հիւանդանոցի դպրոցին, որ ի Բանկալթի։

Այս առթիւ կարգադիր յանձնախումբ մը կազմուած է, որոյ անդամոց անունները մեր վաղուան թիւով պիտի հրատարակենք։ Յանձնախումբն ամեն միջոց ձեռք առած է արժանավայել շուք մը տալու հանդիսին, որոյ հասոյթը հարիւրաւոր ուսանողաց ձրիապէս դասատուութեան պիտի յատկանայ, ըստ որում յիշեալ դպրոցն ձրի ուսումնք կ'աւանդէ։ Կ'ըսուիրենք յուսալ թէ ազգայինք յօժարակամ պիտի փութան գնել պարահանդէսին տոմսակներն և այսպէս պիտի նպաստեն փայլուն յաջողութեան մը ձեռք բերուելուն, որուն ապաքէն արժանի է յիշեալ կրթական հաստատութիւնը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

—o—

Եգիպտոսի խնդրոյն վրայ մեր վերջին յօդուածէն ի վեր, կարեւոր դէպքեր տեղի ունեցան։ Թօգարի բերդն ապստամբաց ձեռքն ինկաւ, և կորտոն փաշա, որ Խարդում հասած էր, ցոյց տուաւ թէ ի՛նչ եղանակաւ կ'ըմբռնէ Սուտանի խաղաղացման գործը։ Օսման Տիկմա 20,000 մարդով կը պաշարէր զթօգար, զոր կը ռմբակոծէր նոյն Քրուբի թնդանօթներով զոր կորզած էր Պէյքէրը փաշայի պարտեալ զօրախմբէն։ Թօգարցիք չկրնալով դիմադրել, անձնատուր եղան Անգլիացի օգնական զօրաց հասնելէն առաջ, որք նոյն միջոցին Թրինքիդադ կ'ելնէին փութով դէպ ի Թօգար երթալու համար։ Օսման Տիկմա խոստացած էր Եգիպտացւոց որ եթէ յօժար կամօք անձնատուր լինին, պիտի խնայէ իրենց կենաց, և իւր այս խոստումը պահելով, բերդապահ զօրքը զէնընկէց ընելէ յետոյ, թոյլ տուաւ որ դէպ ի Սուաքիմ քաշուին երթան։ Ապըստամբք յայնժամ մտան ի Թօգար, ուր, ինչպէս նաև ի Սինդադ, կարեւոր դիրքեր բռնած կը կենան։ Թէև Օսման Տիկմա քանիցս յայտարարած էր թէ Անգլիացիներէն չվախնար, և զթօգար գրաւելէ յետոյ ինք իսկ անոնց վրայ պիտի քալէ ի Սուաքիմ, բայց Թօգարի բերդապահ զօրաց կեանքին խնայելը կը վերագրուի անգլիական օգնութեանց հասնելու լրոյն, և Անգլիացիները չզայրացնելու փափաքին։ Եւ արդարև, Թօգարի այս կերպ անկմամբ Անգլիացւոց նպատակը մասամբ կատարուած կը լինի. որովհետև անոնք ալ, եթէ յաջողէին հասնիլ ի Թօգար, ուրիշ բան չպիտի ընէին բայց եթէ բերդապահ զօրքն ու ժողովրդեան բուն Եգիպտացի մասը քաղաքէն պիտի հաւէին և Սուաքիմ պիտի բերէին՝ բերդին ամրութիւնները քանդելէ և ռազմամթերքը բառնալէ յետոյ։ Թէ և բերդն ու ռազմամթերքն ապստամբաց ձեռքը կը մնան, բայց արիւնհեղութիւն պատահած չլինելով, Անգլիացւոց բուն ուրիշ։

Կորտոն փաշա Խարդում հասնելէ ոմն ծանոյց Սուտանցւոց թէ Եգիպտական իշխանութիւնը վերցած է Սուտանի վրայէն։ Որովհետեւ Եգիպտական իշխանութիւնը հարստահարիչ իշխանութեան մը հետ հոմանիշ եղած էր, այս յայտարարութիւն բնականաբար մեծ գոհունակութիւն պատճառեց։ Կորտոն փաշա վերցուց այդ հարստահարիչ դրութեան արտաքին նշաններն ալ, ինչպէս՝ ժողովրդեան անվճար պարտուց արձանագրութիւնները, գանակոծութեան գործիքներն, և այլն։ Անվճար տրոց կէսը ներեց ժողովրդեան, որոյ բոլոր գանգատները լսելու և գոհացում տալու մեծ յօժարութիւն ցուցուց։ Բայց ուրիշ զիջում մ'ալ ըրաւ Սուտանցիներուն, որ այսօր մեծ խնդիր մ'եղած է թէ՛ Եգիպտոսի և թէ՛ Եւրոպական երկիրներու, մանաւանդ Անգլիոյ մէջ։ Կորտոն փաշա յայտարարեց թէ [illegible] դէպ ի Սուաքիմ, այսինքն երկրին բնակիչները կարող պիտի լինին գերիներ առնելու և վաճառելու, և իրենց ծառայութեան մէջ գտնուող սպասաւորներն ու սպասուհիները, զորս դրամով գնած են, իրենց ինչքը գործածելու։ Ինչպէս գիտեն լրագիր կարդացողները, այս նոդկալի առեւտուր Անգլիոյ, Թուրքիոյ և Եգիպտոսի օրինաց արգիլուած է, և այս երեք տէրութիւնք գովելի ջանքեր ըրած են դայն չնչելու։ Անգլիա և Եգիպտոս, Թուրքիոյ հաւանութեամբ պայմանագրեր կնքած են, որովք փոխադարձ պարտականութիւններ յանձն կ'առնուն Սուտանի մէջ գերեվաճառը չնչելու։ Եգիպտական իշխանութիւնք ազգու միջոցներ ի գործ պիտի դնէին գերեվաճառն արգիլելու, և կարմիր ծովու մէջ չջլող անգլիական մարտանաւք պիտի բռնէին գերի բարձող նաւերը։ Եւ որ աւելին է, նոյն ինքն կորտոն փաշա, որպէս ընդհանուր կառավարիչ Սուտանի, իրեն գլխաւոր նպատակ ըրած էր չնչել գերեցառուտուրն ի Սուտան։ Իւր այս պաշտօնը մեծ խստութեամբ ի գործ դրած էր, և այդ պատճառաւ սաստիկ վէճեր ունեցած էր Սուտանի ազդեցիկ ցեղապետներուն հետ որոց գլխաւոր զբաղումն էր գերիներ դտնել, գնել ու վաճառել։ Արդ, ի՞նչ պատճառաւ կորտոն փաշան կը յայտարարէ այժմ թէ թոյլտուութիւն պիտի ընէ այդ միւնոյն ապօրէն և հակամարդկային առեւտրոյն։ Ամեն կողմէ մեծ հետաքրքրութեամբ և միանգամայն մեծ ցաւով եղած այս հարցման տակաւին նոյն ինքն կորտոն փաշայի կողմէ պատասխան տրուած չէ։ Բայց ընդհանրապէս տրուած բացատրութիւնը սա է. —

Կորտոն փաշային ի Սուտան բուն պաշտօնն և նպատակն է առաջքն առնուլ ընդարձակ արիւնհեղութեանց, որոց ցարդ թատր հանդիսացաւ այդ երկիր, և որք խորին վիշտ և զարհուրանք պատճառեցին համայն քաղաքակրթեալ աշխարհի։ Կորտոն փաշա միջոց ձեռք պիտի առնուր Սուտանը պարպելու, այսինքն հոն գտնուող առաւել քան 25,000 եգիպտացի զօրքերն, իրենց ընտանեօք և եգիպտացի պաշտօնատարաց ու բնակչաց հետ, ողջմէջ երկրէն հանելու և և յեգիպտոս ետ բերելու։ Այս նպատակին հասնելու համար, բնականաբար ամեն զիջում պիտի ընէր Մէհտիին մարդոց։ Արդ, Մէհտիին և իւր կուսակցաց բուն նպատակն է գերեցառուտրոյն—ազատութիւնն—ի Սուտան։ Մէհտին նիւթական այժ կը գտնէ այնպիսի հզօր ցեղապետներու կողմէ, որք եգիպտական կառավարութեան վշտացած են սա միակ պատճառաւ թէ թոյլ չտար գերեցառուտրոյն, և դժուարութիւններ կը յարուցանէ։ Կը կարծուի մինչև իսկ թէ այդ ցեղապետներն են որ Մէհտին դրդռած են Գահիրէի կառավարութեան դէմ։ և կրօնական գոյն մը՝ն պատճառաւ տուած են ապստամբութեան, որպէս զի լաւագոյնս սքօղեն այն ապօրէն նպատակն որուն համար կը կռուին։ Բաց աստի, Մէհտիին ձեռքն ինկած բոլոր գաւառներու մէջ, գերեցառուտրն ըստ առաջնոյն կը շարունակէ։ Արդ, մինչև կատարելու համար կորտոն փաշա Մէհտիին կուսակիցները գոհ ընելու հարկին մէջ կը գտնուէր, ուրիշ բան մը այնչափ գոհ չպիտի ընէր զանոնք բայց եթէ այն ծանուցումն թէ կորտոն փաշան արգելք չպիտի յարուցանէր գերեցառուտրոյն դէմ։ Միւս կողմէ, դիտել կը տրուի նաեւ թէ, գերեցառուտրն՝ թէ եւ անգլոյ-եգիպտական օրինաց և կանոնադրութեամբք արգիլեալ, միշտ ի գործ կը դրուէր ի Սուտան, —որ բոլոր աշխարհի մէջ, գերեցառուտրոյն ամենէն աւելի ընդարձակութիւն ստացած երկիրն է։ Եգիպտացի պաշտօնատարք ամենուրեք խիստ հսկողութիւն ի գործ դնելու կարող չէին լիներ, և գուցէ գիտութեամբ աչք կը գոցէին, և քանի որ Մէհտիին իշխանութիւնն հաստատուէր Սուտանի մէջ, յայտնի կ'երեւէր թէ բոլորովին անգործադրելի պիտի մնար եգիպտական կառավարութեան արգելքն ընդդէմ գերեվաճառի։ Հետեւապէս, կորտոն փաշայի յայտարարութիւնն իրաց արդի վիճակին մէջ փոփոխում մը չպիտի ընէ, իսկ գերեվաճառին ապագային մէջ արգելման դալով, ադոր վրայ խորհելու ժամանակ կայ, մինչդեռ հիմա գլխաւոր կէտ նպատակին է ըստ ամենայնի գոհ ընել Մէհտիին կուսակիցներն, որպէս զի նոր ապրիւնհեղութեանց պատճառ չլինին։

Այս ամեն նկատողութիւնք ցոյց կուտան թէ Անգլիա օրպիսի մեծ զոհողութիւններ յանձն առնելու հարկին մէջ կը գտնուի Սուտանի խնդրոյն գէթ առժամեայ կարգադրութիւն մը տալու համար։ Բարբարոսութեանց դէմ քաղաքակրթութեան դատին մէջ, Մեծն Բրիտանիա, այն մեծ ջատագովն ազատական սկզբանց, կը պարտաւորի զոհել քաղաքակրթութեան սկզբունքներն և ցարդ կատարած աշխարհակալութիւններն։ Անգլիա, որ բոլոր աշխարհի մէջ գերեցառուտրոյն ջնջման ամենահզօր կուսակիցն եղած էր, և կորտոն փաշա, որ Սուտանի մէջ գերեցառուտրն և առեւտուրը ջնջելու համար ամենահզօր կերպիւ աշխատած էր, կորտոն փաշա, որ իբրեւ անկեղծ և համոզուած քրիստոնեայ մը, սոսկմամբ կը դիտէր մարդկային արարածներու տուր և առն, զէնընկէց ընելու համար Մէհտին՝ կը պարտաւորի՞ն ճանչել և թոյլատրել գերեվաճառն։

Բայց միթէ նուա՞զ զոհողութիւն մ'է ճանչել Մէհտիին իշխանութիւնը, և քորտոֆանի, այսինքն կեդրոնական Սուտանի Սուլթան հրատարակել զնա։ Եթէ կայ ուրիշ բան մը, որ ամենէն աւելի հաճոյք պատճառած է Մէհտիին կուսակցաց, այն ալ սա է թէ Մեծին Բրիտանիոյ և Խտիվական կառավարութեան միացեալ զօրութիւններն իւր կռնակն ունեցող կորտոն փաշան Խարդում չդար իբրեւ հակառակորդ Մէհտիին, այլ ընդհակառակն վաւերացում, հաստատութիւն տալու անոր աշխարհավարութեանց, և օրինաւոր հրատարակելու Մէհտիական իշխանութիւնն ի Սուտան։ Կը յիշուի թէ որոշուած էր վերահաստատել Սուտանի նախկին Սուլթանները կամ Էմիրները, կամ անոնց ներկայացուցիչներն, իբրեւ երկրին օրինաւոր տերերը։ Բայց եթէ այս բնիկ իշխանք չեն կրնար Մէհտիին դէմ դնել, կորտոն փաշա որոշած է որ ճանչեն Մէհտիին գերիշխանութիւնն։ Այսպէս, Մէհտին ո՛չ միայն տէր պիտի լինի Սուտանի մի կարեւոր մասին, այլ իւր գերիշխանութեան ենթարկուած պիտի տեսնէ ուրիշ մասանց ալ իշխանները։ Բնիկ Սուլթանաց մէջ անոնք որ չուզեն ճանչել Մէհտիին գերիշխանութիւնը, պիտի ենթարկին Եգիպտոսի Խտիվին գերիշխանութեան, և բոլոր Սուտան պիտի դրուի ընդ գերագոյն իշխանութեամբ վեհ. Սուլթանին։ Դժուար չէ գուշակել թէ Մէհտին, անկախ վեհապետի մը դիրքն ստանալով, դժկամակութեամբ պիտի տեսնէ իւր չուրջ գտնուող այն փոքր իշխաններ որք զինք չեն ճանչեր, ուստի անոնց հետ պատերազմի պիտի բռնուի, մինչեւ որ տիրելով բոլոր Սուտանի՝ մչտական սպառնալիք մը դառնայ բուն Եգիպտոսին։ Ըստ ամենայն հաւանականութեանց, Մէհտիին մայրաքաղաքը պիտի լի[illegible] գլխաւոր քաղաքն, ուր է այժմ ինք, իւր բանակին կեդրոնին հետ։ Թէ ի՞նչ պիտի լինի Խարդում, որոյ պէս յայտնի չէ դեռ։ Ըստ ոմանց, կորտոն փաշա չպիտի թողու զԽարդում, այլ հոն պիտի նստի՝ վերին հսկողութիւն մ'ի գործ դնելու համար Սուտանի նորակազմ իշխանապետութեանց վրայ։ Ըստ այլոց, Խարդում "Սուտանցւոց պիտի թողուին," այսինքն Մէհտիին մարդոց։ Քանի մ'օր պէտք է սպասենք այս մասին որոշ տեղեկութիւն մը ստանալու համար։ Սա ստոյգ է թէ կարմիր ծովու եզերքէն տեղ չպիտի թողուի Մէհտիին, բայց Օսման Տիկմա, Մէհտիին ալ բազուկն, որոյ[illegible] տիրել կա՛մ Սուաքիմի և կա՛մ Թրինքիդադի, յորմէ դիւրին է մակաբերել թէ այս օրերս սաստիկ ընդհարում մը տեղի պիտի ունենայ ի մէջ նոյն իսկ Անգլիացւոց և Մէհտիին մարդոց։ Գուցէ այս կերպիւ դաս մը տրուի Մէհտիին՝ իւր չափը գիտնալու, և իւր յատակութիւնները Սուտանի անապատներուն մէջ սահմանափակելու։ Խարդումի պահպանումը նոյնչափ հարկաւոր էր Եգիպտոսի համար, որչափ կարմիր ծովու եզերաց պահպանումն, և արդարեւ ազատալի որոշում մը կը լինի, եթէ Խարդում որոշուի լինել մայրաքաղաք ապագայ Մէհտիական իշխանութեան։

Մեր եզրակացութիւնն այս օրուան համար սա է թէ յոյժ հաւանական է այժմ որ Մէհտիին խընդիրը կարգադրի և Սուտան խաղաղպէս պարպուի, այլ ի՞նչ գնով...։

## ԲԱՐԵՇՐՋՈՒԹԻՒՆ

—•—

Ա— Պարոն Նորայր Բէ-ղնդաշէ ի Մշոյ.

—

(Շար. եւ վերջ)

Օրէնք, այո՛. Նոր իմաստասիրութիւնն օրէ՛ն է կ'ազդազակէ։ Եւ տիեզերաց առաջին օրէնքն է փոփոխութիւն, զարգացում, յառաջադիմութիւն։ Ոչինչ արարչութեան մէջ այս օրէնքէն կը վրիպի. և ըստ որում լեզուն ալ արարչութենէն արտաքոյ չէ, լեզուն ալ հետեւաբար կը ձգտի փոփոխութեան, համասեռութենէ կը դիմէ տարասեռութեան. լեզուն ալ ենթարկուած է ներքին և արտաքին սատարաց ազդեցութեան։ Տիեզերական ճշմարտութիւն մ'է թէ՝ Համասեռական վիճակն անհաստատ վիճակ մ'է. (Լ'էջա պ'օմ. ժենէրէ է դ'էն էրա ենպրոպրէ)։

Արդ մեծապէս կը սխալիք, Պարոն Նորայր, երբ կը քարոզէք՝ լաւագոյն դատի մ'արժան եռանդեամբ թէ. Ա. Գրաբարն Հայոց առաջին լեզուն եղած է. Բ. Գրաբարն օտար ազդեցութիւն կրած չէ։ Դ. Տարբեր պայմաններու մէջ՝ այսօր՝ պիտի վերածնի գրաբարն։ Դ. Աշխարհաբար լեզուն որ — իր արդի ուղղութեան մէջ ընթանալով՝ տակաւ առ տակաւ պիտի կատարելագործուի և հաստատուի —, հրէշ է, պոռ է, և այլն։

* * *

Ահա խօսեցայ, որովհետև պատիւ ըրած էիք հրաւիրել զիս եւ՝ որպէս զի կարծիքս յայտնեմ։ Ես ո՛չ հայկաբան եմ ձեզ նման, և ո՛չ գիտուն՝ Լիդռէի նման։ Ես գրասէրոմն եմ՝ որ կ'երթամ Նոր իմաստասիրութեան ետեւէն և Հայ ժողովրդեան առջեւէն, դոցա միջև իբրեւ կապ մը կամ միջոց մը հաղորդակցութեան։ Եւ — զարմանալի բա՛ն—դուք որ ֆռանսերէն գիտէք ու դեռ շատ բաներ, Լիդռէէն և իր գաղափարներէն առաւել հեռի էք քան ժողովուրդն, որ գործնականապէս յարեալ է նոր գաղափարաց։ Ժողովուրդն աշխարհաբարեան է, զիւ ծնողն և առաջին հեղինակն արդէն ինքն է աշխարհաբարին։ Կը տեսնեմ նաև բազում ժողովրդական մարդիկ ալ, որք ո՛չ Բագրատունիէն և ո՛չ Լիդռէէն գրաւոր կամ բերանացի գովեստ ընդունած են, այլ որք ընդունած են ընդհանուր կերպով բարեշրջական վարդապետութիւնն, — որ չը մեռաւ իր մեծ վարդապետաց՝ Ցարուխնի և Լիդռէիի հետ։ Թիւրիմացութեան տեղի չը թողու հանմա. Ի՞սկեմ թէ ռատեռոթիւն հանապազ կատարելագործութիւն չը նշանակեր. զանազան պատճառներով, նախկին վիճակ մը կրնայ յաւէտ կամ նուազ տարբերութեամբ երեւան գալ. Սակայն հանապազ ստոյգ է, անհանջելի է փոփոխութիւն. ոչինչ կը մնայ նոյն. և գրաբար լեզուն չէր կրնար երբեք խուսափիլ այս յաւիտենական փոփոխութեան օրէնքէն։

Դուք անշուշտ, Պարոն Նորայր, աւելի լաւ կը հասկնաք եղնիկն և կամ ձեր անուանակից Բիւզանդ պատմիչն. այլ ես կարող եմ՝ քան զձեզ աւելի լաւ թափանցել Լիդռէն և Սբէնսէրն. և երջանիկ կը համարիմ զիս՝ այս պատճառաւ։ Երջանիկ կը համարիմ զիս, որ ի վենետիկ դաստիարակութիւն առած չեմ. որովհետև գուցէ ես ալ այժմ գրաբարեան մ'ըլլայի, և՝ փոխան ազգիս մէջ դրական կենսաւէտ գաղափարներ ծաւալելու և աշխարհիկ լեզուն մշակելու՝ հանրութեան անմատոյց գրաբար թարգմանութիւններ ընելու կամ գրաբար բառագիրքեր յօրինելու հետամուտ ըլլայի և միջնադարեան գաղափարաց արձագանգ ըլլայի. և գուցէ չը շատանալով այս յաւէտ կամ նուազ մեքենական աշխատութեամբք՝ գրաբարին և աշխարհաբարին բոլոր նախատական ածականներն իրարու քով շարելի խառնիխուռն, կարծելով որ յօդուած մը կը գրեմ աշխարհաբարին դէ՛մ։ Զիս երջանիկ կը համարիմ, զի Պօլսոյ մէջ ստացած եմ աշխարհական կրթութիւն. չնորհիւ այս կրթութեան անշուշտ, երբ արժանաւորութիւն մը տեսնեմ՝ վանքին մէջ թէ՛ վանքէն դուրս, լուսաւորչական, թէ՛ Հռովմէական թէ՛ Բողոքական Հայոց մէջ, անկողմնակալ կերպով կը հռչակեմ դայն. իսկ դուք, Պարոն Նորայր, կրոկին ու կրկին կը յիշէք Ձեր կրկին Մխիթարեանց անդամներն՝ անյաղաղաբար զայնս դրուատելու համար, և կը յիշէք միայն Պօլսոյ եւ Զմիւռնիոյ գրագէտներն՝ անոնցմէ գովեստ... մուրալու համար։ Երջանիկ կը համարիմ զիս, որ երեք չորս անգամ Մոսքոյ մէջ, որպէս և մասնաւոր հրատարակութեանց մէջ, դրեցի ձեր բառագրքին վրայ, յարգանք ընծայելով ձերհայկաբանական հմտութեան, զարմացում յայտնելով ձեր հաստատամտութեան վրայ, խորին կարեկցութեան արտասուօք յիշատակելով ձեր չարատանջ աշխատութիւնն, — որովհետեւ զձեզ կը տեսնէի՝ որ իբրեւ հասարակ ցորուիչ կը շրջէիք Պօլսոյ փողոցներուն մէջ, դուք որ՝ իբրեւ հայկաբան և իբրեւ անխոնջ ու տաղանդաւոր մը՝ չակ Հայ գրականութեան՝ պարտէիք վայելել ամենահանգիստ և անտաղտուկ կեանք. երջանիկ եմ, զի մատուցի ձեր գործոյն՝ այդ ծառայութիւնն, երբ դուք տո՛ղ մ'իսկ չը հաճեցաք նուիրել իմ հրատարակութեանցս և այնքան ձեռնարկութեանցս։ Երջանիկ անձս կը համարիմ նաև, զի դուք ըզ ձեզ պաշտպանելէ յառաջ Պարոն Մեսրոպ Նուպարեանի դէմ, ես Գրիգոր և Իսմոսոբեան Շարժումիս նոր տարւոյ նախաթիւ ամսատետրին մէջ գրեցի հետագայ տողերն. «Պարոն Մեսրոպ Նուպարեան, որ մ'ոչ անուան հետ մեծ հմտութեան տէր երիտասարդ մ'է, պատրաստած է Ֆռանսերէնէ Հայ—աշխարհի բառարան մը, որը տպագիր Յայտարարութենէն օրինակ մ'ալ հաճած է մեզ յուղարկել։ Նոր բառարէրն իր նախորդներն յոյժ խոր-ընթաց կը դարձ. սակայն ադ Յայտարարութեան իմաստներէն և խմբագրութեան ոճէն՝ ամենադերազանց գործ մը չեմ գուշակեր ես, որպէս կը խոստանայ հմուտ այլ յանդուգն հեղինակն, կը տեսնէք, Պարոն Նորայր, թէ՝ ո՛չ միայն ըզ ձեզ պաշտպանած եմ, այլ և ըզ Հայը Լիմինեան՝ զոր յոյժ խստութեամբ կը դատէք դուք ալ, և պաշտպանած եմ բոլոր պատուաժան բառագիրներն, որոյ գործերն օգտակար եղած են իրենց ժամանակին։ Մարդ մը յաւէտ յարգանք պարտի իր նախնեաց, և հեղինակ մը պարտի յաւէտ յարգանք իր նախորդաց։

Մտադիր չէի գրել այսքան երկար և այսքան ծանր. մտադիր էի մանաւանդ խնդիրն ամենաւին դիտական տեսակէտով մը քննել. Գուցէ Երէվանի կամ Շարժումի մէջ [illegible]։ Այլ թէ ի՞նչ տեսակէտով ալ նայիմ ձեր գրութեան վրայ, կիրք կը դտնեմ հոն, բուռն բորբոքում՝ որպէս ըստ Մոսքոյ. հոն կը դտնեմ յայտնի ատելութիւն արդի հայերէնին դէմ, և խուլ այլ անողոք ատելութիւն մը այն գրագիտաց դէմ՝ որք աշխարհաբարեան կը յայտարարեն զիրքեանս և որք կը վարեն գաղափարաշատ այն աշխարհիկ գրականութիւնն։ Ահա՛ կիրք ընդդէմ կրից. այլ ո՛չ ատելութիւն ընդդէմ ատելութեանդ. ես կը յարգեմ ըզ ձեզ իբրեւ հայագէտ, և ընդ ձեզ կը յարգեմ ու կը սիրեմ դրաբարի հին և նոր ոսկեղեղու մատենագիրներն։ Այլ ահա անգամ մ'ալ կը հռչակեմ. —մեր նախնեաց գրական լեզուն էր գրաբարն, բայց այսօր մեր գրական լեզուն է աշխարհաբարն. Այդ պոռէն դուրս փրկութիւն չը կա՛յ։

ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ

## ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ԳԵՐ. ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

—

Տէ՛ր.

Նախընթաց չաբթուան Տրապիզոնի թղթաթերը գուժելով մեզ մեր սիրելի Առաջնորդին և իմ Սրբազան Հօր Նազարեան Մատթէոս Սրբազան Եպիսկոպոսի վախճանը՝ ի խոր խոցեց Զարշամպայի ամբողջ հասարակութեան սրտերը։

Հանգուցեալ Սրբազանը իր երկոտասանամեայ առաջնորդական պաշտօնավարութեամբ ծանօթ ըլլալով Ազգիս լրութեանը, լայն անշուշտ մեր հետ ամեն Հայեր ալ, մանաւանդ եկեղեցական դասը, որուն մէջէն կը պակսէր այնպիսի մէկը, որ պատիւ բերած էր եկեղեցականութեան և ազգայնութեան։

Զորս տարիէ հետէ Նորին Սրբազնութեան փոխանորդութեան պաշտօնը վարելու պատիւն ունեցած ըլլալով, և հետեւաբար ի մօտոյ տեղեակ Նորին առաջնորդական ընթացից, պէտք է խոստովանիլ, թէ հանգուցեալը իր վրայ կը կրէր այն ամեն յատկութիւնները, զորս անհրաժեշտ է ունենալ Առաջնորդի մը։

Պատրիարքարանն եւս գնահատած ըլլալով հանգուցելոյն արժանիքը, չորս տարի առաջ Տրապիզոնի վիճակին միացնելով ճանիկն ալ՝ Նորին Սրբազնութեան հովանութեան յանձնած էր։

Մատթէոս Սրբազանի պաշտօնավարութեան շրջանին մէջ վիճակին ազգային գործերը նախանձելի դիրք մ'ունեցան։ Իր Տրապիզոնը կոխած օրէն մինչև վերջին օրը ազգային երկսեռ վարժարանները միշտ փայլուն մնացին, ազգայնոց նիւթական և բարոյական վիճակը զարգացաւ, ընդարձակ դերեզմանատուն մը, քարուկիր նոր առաջնորդարան մը և աղկանց դպրոց մը շինուելէ զատ, տարուէ տարի բաւական անշարժ կալուածներ աւելնալով, ազգային վարժարանաց նիւթականը ապահովեցաւ. Եկեղեցեաց պայծառութիւնը, ինչպէս նաև եկեղեցական անօթները չատցան, զորս Առաջնորդարանի մէջ իր խնամոց տակ կը պահէր. վերջապէս ազգին փառքն աւելցնող շատ մը իրական հաստատութիւններ անմոռանալի յիշատակ են հոգելոյս Սրբազանին, որոյ տասն երկու երկար տարիներ պաշտօնավարութեան մէջ երբեք դժգոհութեան ձայներ չլսուեցան իր դէմ։

Նաղարեան Սրբազան ոչ միայն ազգային ներքին վիճակը փայլեցո՛ւց այլ և իր նուրբ քաղաքագիտութեամբ յարաբերական գործերն այնպէս կը կարգադրեր, որ առանց Պատրիարքարանի դիմելու կամ լաւ եւս է ըսել առանց անոր ծանրութիւն տալու, ինք իր փորձառութեամբ ի գլուխ կը հաներ, և ոչ միայն ազգայնոց այլ իրեն դիմողաներն ազգի անհատներուն ալ գործերը կարգադրելով կը գոհացնէր, կ'օգնէր ամենուն ալ անխտրաբար թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս, որով առաջնորդական դիրքը բարձրացնելով հանդերձ՝ պատկառելի և սիրելի եղած էր ամբողջ վիճակին ամեն ազգի հասարակութեան ալ, ինչպէս Տրապիզոնէն հասած բազմաթիւ նամակներ կը հաստատեն թէ ուրացաւ ամբողջ քաղաքը։

Հոգելոյս Սրբազանին պաշտօնավարութեան ամբողջ շրջանին մէջ թէ՛ կառավարութեան, թէ՛ երոպական հիւպատոսաց և թէ՛ քրիստոնեայ ազգաց գլուխներու հետ յարաբերութիւնք և ոչ իսկ օր մը ցրտացան և մինչև իր վերջին օրը կը վայելէր նա անոնց ամենուն ալ ինչպէս նաև Եւրոպացի հիւրերու և վաճառականներու սէրն ու համակրութիւն։

Կը մնայ մեզ խնդրել յերկնից հանգիստ հանգուցելոյն, և արժանաւոր յաջորդ Տրապիզոնի մեծ վիճակին։ Փոխ. Առաջնորդ Ճ՝ՈՒՄԱՅԻ

ՄԱՄԲՐԷ Ե. Վ. ԲԶՆՈՒՆԻ

1 փետրվար 1884

ի Զարշամպա

## ԳԱՂԱՏԻԱ

—o—

. . . Տէր.

Ազգերու կենաց և երջանկութեան, նոյնպէս զանոնք բաղկացնող անհատից ապագային բարւոքման առիթը իւրաքանչիւր ներհուն անձ կը մեկնէ այլ և այլ կերպիւ, ըստ իւրեան նկատողութեան կէտին։ Կ'ըսեն թէ ընդհանրապէս և մասնաւորաբար կեանքը, ապագան և երջանկութեան յարատեւութիւնը կախում ունի հարստութենէ, զօրութենէ, երկրագործութենէ, ձեռարուեստներէ, վաճառականութենէ և ասոնց նման տարրներէ։ սակայն նոցա մէջ—«մայր ամենայն բարեաց է դպրոց և ուսումն» — գաղափարը միշտ յաղթող կը հանդիսանայ, զորն որ ապացուցանելու փոյթն իսկ գրեթէ աւելորդ է։ Քանզի ամեն ոք կը խոստովանի թէ առանց գիտութեան ոչինչ է կարելի։ իսկ գիտութեան աղբիւրք են դպրոցք։

Այս սկզբունքը դարուս շարժմամբ, և նմանեաց ու արդանց թելադրութեամբ՝ ընդհանրապէս ընդունուած և դիտացուած է։ Այս ընդունուած և դիտացուած կէտին նկատմամբ մի քանի տեղեր հիմնադրեալ մի քանի մասնաւոր դպրոցներէ զատ փոքր ի չատէ դարձացեալ ազգային ուրիշ վարժարաններու վրայ լրագիրներն մինչև այս օրերս անհրաժեշտ է ունենալ Առաջնորդի մը։

Պատրիարքարանն եւս գնահատած ըլլալով հանգուցելոյն արժանիքը, չորս տարի առաջ Տրապիզոնի վիճակին միացնելով ճանիկն ալ՝ Նորին Սրբազնութեան հովանութեան յանձնած էր։

Մատթէոս Սրբազանի պաշտօնավարութեան շրջանին մէջ վիճակին ազգային գործերը նախանձելի դիրք մ'ունեցան։ Իր Տրապիզոնը կոխած օրէն մինչև վերջին օրը ազգային երկսեռ վարժարանները միշտ փայլուն մնացին, ազգայնոց նիւթական և բարոյական վիճակը զարգացաւ, ընդարձակ դերեզմանատուն մը, քարուկիր նոր առաջնորդարան մը և աղկանց դպրոց մը շինուելէ զատ, տարուէ տարի բաւական անշարժ կալուածներ աւելնալով, ազգային վարժարանաց նիւթականը ապահովեցաւ. Եկեղեցեաց պայծառութիւնը, ինչպէս նաև եկեղեցական անօթները չատցան, զորս Առաջնորդարանի մէջ իր խնամոց տակ կը պահէր. վերջապէս ազգին փառքն աւելցնող շատ մը իրական հաստատութիւններ անմոռանալի յիշատակ են հոգելոյս Սրբազանին, որոյ տասն երկու երկար տարիներ պաշտօնավարութեան մէջ երբեք դժգոհութեան ձայներ չլսուեցան իր դէմ։

Նաղարեան Սրբազան ոչ միայն ազգային ներքին վիճակը փայլեցո՛ւց այլ և իր նուրբ քաղաքագիտութեամբ յարաբերական գործերն այնպէս կը կարգադրեր, որ առանց Պատրիարքարանի դիմելու կամ լաւ եւս է ըսել առանց անոր ծանրութիւն տալու, ինք իր փորձառութեամբ ի գլուխ կը հաներ, և ոչ միայն ազգայնոց այլ իրեն դիմողաներն ազգի անհատներուն ալ գործերը կարգադրելով կը գոհացնէր, կ'օգնէր ամենուն ալ անխտրաբար թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս, որով առաջնորդական դիրքը բարձրացնելով հանդերձ՝ պատկառելի և սիրելի եղած էր ամբողջ վիճակին ամեն ազգի հասարակութեան ալ, ինչպէս Տրապիզոնէն հասած բազմաթիւ նամակներ կը հաստատեն թէ ուրացաւ ամբողջ քաղաքը։

Հոգելոյս Սրբազանին պաշտօնավարութեան ամբողջ շրջանին մէջ թէ՛ կառավարութեան, թէ՛ երոպական հիւպատոսաց և թէ՛ քրիստոնեայ ազգաց գլուխներու հետ յարաբերութիւնք և ոչ իսկ օր մը ցրտացան և մինչև իր վերջին օրը կը վայելէր նա անոնց ամենուն ալ ինչպէս նաև Եւրոպացի հիւրերու և վաճառականներու սէրն ու համակրութիւն։

Կը մնայ մեզ խնդրել յերկնից հանգիստ հանգուցելոյն, և արժանաւոր յաջորդ Տրապիզոնի մեծ վիճակին։ Փոխ. Առաջնորդ Ճ՝ՈՒՄԱՅԻ

ՄԱՄԲՐԷ Ե. Վ. ԲԶՆՈՒՆԻ

1 փետրվար 1884

ի Զարշամպա

## ԳԱՂԱՏԻԱ

—o—

. . . Տէր.

Ազգերու կենաց և երջանկութեան, նոյնպէս զանոնք բաղկացնող անհատից ապագային բարւոքման առիթը իւրաքանչիւր ներհուն անձ կը մեկնէ այլ և այլ կերպիւ, ըստ իւրեան նկատողութեան կէտին։ Կ'ըսեն թէ ընդհանրապէս և մասնաւորաբար կեանքը, ապագան և երջանկութեան յարատեւութիւնը կախում ունի հարստութենէ, զօրութենէ, երկրագործութենէ, ձեռարուեստներէ, վաճառականութենէ և ասոնց նման տարրներէ։ սակայն նոցա մէջ—«մայր ամենայն բարեաց է դպրոց և ուսումն» — գաղափարը միշտ յաղթող կը հանդիսանայ, զորն որ ապացուցանելու փոյթն իսկ գրեթէ աւելորդ է։ Քանզի ամեն ոք կը խոստովանի թէ առանց գիտութեան ոչինչ է կարելի։ իսկ գիտութեան աղբիւրք են դպրոցք։

Այս սկզբունքը դարուս շարժմամբ, և նմանեաց ու արդանց թելադրութեամբ՝ ընդհանրապէս ընդունուած և դիտացուած է։ Այս ընդունուած և դիտացուած կէտին նկատմամբ մի քանի տեղեր հիմնադրեալ մի քանի մասնաւոր դպրոցներէ զատ փոքր ի չատէ դարձացեալ ազգային ուրիշ վարժարաններու վրայ լրագիրներն մինչև

չեւ ցարդ կատարեալ գոհունա-
կութեամբ տակաւին չեն խօսիր,
իսկ առաջնոց վրայ բողոքելով
հանդերձ, կը ջանան իրենց օրինակ
ցուցանել ուրիշ ազգերը, որք ի-
րենց դպրոցներէն չատերուն տարե-
կան 3-4000 ական ոսկիներու դու-
մարներ կը ծախսեն. ընդհակա-
ռակն՝ մինչ մեր ազգային բարձրա-
գոյն դպրոցներէն դժգոհութիւն կը
յայտնեն, արդեօք ի՞նչ պիտի ը-
սեն երբ իրագէտ լինին Գաղատիոյ
ազգային՝ մանաւանդ դպրոցական
ցաւալի վիճակին։ Այս հարցման
պատասխանը Զեզ յանձնելով, մեք
ալ Գաղատիոյ անցեալոյն և ներկային
վրայ լուվին տեղեկագրէն յարմար
ժամանակին կը թողուք. միայն
նորա դպրոցական վիճակէն կարճ
սակայն կատարեալ ծանօթութիւն
մը տալու համար այժմէն կը խոս-
տանինք թէ այս մասին «դպրոց
չունէին և չունինք» ըսելու դժբաղ-
դութեան մէջ ենք։

Ցիշեալ բառերը «Դպրոց ունե-
ցանք» բառերուն փոխելու բարի
նպատակին աշխատելու նպատակաւ
ի սորուս սորագրելոցս բաղկաց-
եալ դպրոցական հոգաբարձութեան
ժողով մը կազմուեցաւ, որ հրա-
պարակաց մէջ թափառաշրջիկ և ու-
րիշ ազգաց դպրոցները յաճախելու
դատապարտեալ Ազգ. երկսեռ վար-
ժարանին մանկտին ժողված և Ս.
Խորէնեան երկսեռ վարժարանաց
մէջ նոցա կրթութեան և դաստիա-
րակութեան հոգը ստանձնած է։
Վարժարանիս արական սրահին հա-
մար ինչպէս որ ընդհանուր դասա-
տու կարգուած է կեսարիոյ կերմիր
գիւղաքաղաքին դպրոցէն եկած Մեսռ-
ռոպը Թաշճեան էֆ.։ նոյնպէս ուրիշ
պէտք եղած դասատուներն ալ հետ
զհետէ պիտի կարգուին. և իգա-
կան սրահին համար ալ կ. Պոլսէն
վարժուհի մը բերել տալու որոշում
տրուած է։ Այս նպատակաւ ժո-
ղովս պատիւ ունի յայտնել թէ քա-
ղաքիս ազգային անհատներէ տա-
րեկանի և ամսականի վրայ ընդ-
միջտ հանգանակութիւններ ընե-
լու ձեռնարկուած, և իւրաքան-
չիւր անհատէն, ըստ կարի իւրում,
նիւթապէս և բարոյապէս խրախոյսը
և ժանդակութիւնք թէեւ տեսնը-
ւած և տեսնուելու վրայ են, բայց
ցաւալին այն է՝ որ մէկ կողմանէ
այս երկու վարժարանաց տարեկան
ծախուց, և միւս կողմանէ ալ ար-
դէն յարմար դիրք չունեցող յիշ-
եալ դպրոցը աշակերտաց առողջ-
ութեան նպաստաւոր կերպիւ նո-
րոգելու մասին պէտք եղած արտա-
քոյ կարգի ծախուց պիտի չկրնան
համապատասխանել տեղւոյս ազ-
գային սակաւութիւնն և վերջին
ծայր աղքատութիւնը։

Այս դժուարութիւնները տեսնե-
լով եթէ վհատելու և արդի վիճակին
մէջ թողելու հակամիտինք, այն ժա-
մանակ քարինք պիտի սկսին աղա-
ղակել՝ որով Գաղատիոյ պէս կարևոր
տեղ մը ազգութեան անունը, բոլո-
րովին բնաջինջ պիտի լինի։ Հետևա-
պէս քաջալերուած, կարելի եղածին
չափ ի ներքուստ այսինքն Գաղա-
տիոյ ազգայիններէն թէպէտ և
հանգանակութիւնը կը շարունակէ,
այսու ամենայնիւ ի յառաջիկայս ալ
Կ. Պոլսոյ, Զմիւռնիոյ և այլ տեղ-
եաց ազգասէր և բարերար սրտե-
րուն դիմելով, այս մասին օժան-
դակութեան ձեռն կարկառել խընդ-
րելու հարկադրութեան մէջ պիտի
լինինք այս քաղաքին թշուառ ազ-
գայնոց համար, որք ի բազմաց հե-
տէ թէ՛ բնական անցեալ երաշտու-
թենէ և թէ՛ դիտութեան սովէն
հարեալ տակաւին յանհնարինս կը
տանջուին։

Ուստի . . . Տէր, յանուն Ազ-
գային օգտի կը խնդրեմք որ բա-
րեհաճիք ներկայիս անկիւն մը չը-
նորհել Ձեր ազգօգուտ թերթին
մէջ, պէտք եղած յանձնարարու-
թիւնը չխնայելով։

Որով մնամք երախտապարտ

2 փետր. 1884 (Սորտերոնի)
Գաղատիա

## ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱՐԱՆՑ

(Շարունակութիւն)

Ասկէ զատ, երիտասարդաց հա-
մար ընտրութիւն չկար ընելու։ օ-
րիորդաց ամենը մի և նոյն հանգա-
մանաց մէջ կը գտնուէին, ըստ որում
ամենքն ալ պարտաւորուած էին ա-
մուսին առնուլ մտարերելէ առաջ,
տասն և հինգ կամ քսան տարի
աշխատիլ, մինդեռ աւագանուհ-
եաց ժողովն օրէնք մը հաստատած
էր՝ որ կը պարտաւորէր երիտա-
սարդներն ամուսնանալ, ապա թէ
ո՛չ՝ մշտնջենական բանտարգելու-
թեան կը դատապարտուէին։ Սոքա
գլուխ կը ծռէին քրթմնջելով, և պա-
դած ու ձանձրացեալ ամուսիններ-
ու երեսոյթ կ'առնէին։ Անոնց սիր-
ը չահելու դժուարութիւնը գրա-
գէտներու երեւակայական արտադ-
րութեանց սովորական աղբիւրներէն
մին եղած էր։ Ուելին կայ։ Արու
ժողովրդեան դժգոհութիւնը կ'ըս-
կսէր իրեն չահիլ միւս սեռին երի-
տասարդութիւնը։ Դեռատի աղջ-
կունք՝ որք քննութիւններ տալով և
ընկերական վիճակի մ'ետեւէ վա-
զելով ժամանակ կ'անցընէին, ան-
լուր և անիրաւ կը համարէին տես-
նելով որ, իրենք այդ զբաղմանց
պարապած պահուն, իրենց հօրա-
քոյրերն ու մօրաքոյրերն, մեծ հօ-
րաքոյրերն ու մեծ մօրաքոյրերն,
սիրահարներնին ձեռքերնուն կ'առ-
նէին։ Ուրիշներ ո՛րչափ ալ հնչեցը-
նէին այս աղջկանց ականջներուն
արժանապատուութեան, անձին
բարձրացուցման, անկախութեան
մեծ բառերը, հէք աղջկունք չէին
կրնար չը հառաչել այքի առջեւ բե-
րելով այն ժամանակները յորս ի-
րենց համար կենցաղջադոյն գործն
էր սիրով զբաղիլ։ Ի զուր փաստեր
մէջ կը բերուէին այն անհուն ակնա-
ծութենէն զոր ուժով սեռը, ազա-
տագրութեան մեծ յեղափոխութե-
նէն ի վեր, ցոյց կուտար ընդհա-
նուր կերպով փափուկ սեռին հա-
մար։ Նոքա նախամեծար կը համա-
րէին հաւաքաբար նուազ առարկայ
լինել ակնածանաց և անհատարար
առաւել գգուանք վայելել։ Իշխա-
նապետութեան համար կենսական
խնդիր մ'էր եղած ամուսիններու
սիրահար գործելու խնդիրը։ Մինչ-
չեւ որ սա լուծումմ մը գտնար, ժո-
ղովրդեան թիւն ալ նուազելու վրայ
էր խռովայոյզ արագութեամբ։

Մինչ այս մինչ այն, Լոնտրայի
մէջ նախարարական տագնապ մը
վրայ հասաւ։ Ազատականաց պաշ-
տօնէութիւնն ինկաւ՝ ճիշդ արանց
խնդրոյն պատճառաւ։ Նորա պետը,
Օրիորդ Քենսթանս տը Քարլիսն,
սիրուն էակ մ'էր զոր բացառիկ
կարողութիւններ տերութեան բարձ-
րագոյն պաշտամանց հասուցած էին
այնպիսի տարիքի մը մէջ յորում
իւր հասակակիցք սակաւին դպրո-
ցական գրասեղաններու վրայ կը
գտնուէին։ Իշխանութեան գլուխը
գտնուած միջոցին՝ տարօրինակ կերպ-
ով ընդարձակ և ազատական գա-
ղափարներ ցոյց տուած էր։ Ի մէջ
այլոց, ինքզինքն այր մարդոց ունե-
ցած կացութեան բարւոքմանը կու-
սակից էր հռչակած, որով աւա-
գանուհեաց խորհրդարանին տիկ-
նայք՝ որք եթէ փոփոխութիւն մը
լիներ ամեն բան կորսնցնելով հան-
դերձ բան մը չահելիք չունէին,
ընդդիմադիր կուսակցութեան կողմն
անցած ու նախարարութիւնը տա-
պալած էին։ Երեսփոխանական ժո-
ղովը ջնջուեր էր արդէն. այս ժո-
ղովոյն մէջ կանայք իրարու քով ե-
կածնուն պէս լեզուի այնպիսի զեղ-
ծումներ գործեր էին որ մարդ ինք-
զինքը ցամաքային Եւրոպոյ կարգ
մը քաղաքապետական ժողովոց մէջ
կը կարծէր. ուստի Բրիտանական
կառավարութիւնը պարտաւորուեր
էր ջնջել զայն։

Արու սեռին կացութիւնը բարձ-
րացնելու մասին քենսթանսի կար-
ծիքը չայլայլեցաւ բնաւ իւր խոր-
հրդարանական պարտութենէն։
Իւր դիտմանց մէջ հաստատամիտ
անձնաւորութիւն մ'էր նա, մանա-
ւանդ երբ անձնական չահ կենար
գործոյն մէջ, — նմանելով յայտմ
արու նախարարներէ չատերու.
ըսենք ուրեմն թէ արանց իրաւանց
խնդրոյն մէջ իւր անձնական չահը
ստիպողաբար կը մղէր զինքն։ Այս
խնդրոյն վրայ փիլիսոփայական ցա-
մաք ու վերացական նկատողու-
թեամբք չէր խորհրդածեր նա, այլ
իւր սրտովը կը դատէր զայն, ըստ այն
սովորութեան որ իւր սեռն այնչափ
սիրուն և այնչափ անտրամաբանական
կը գործէ. արդ, իւր բարի սրտիկը
կը թելադրէր իրեն թէ անխղճու-
թիւն կ'ըլլար յանուն օրինաց ստի-
պել իւր քսան երկու տարեկան
սիրադէմ մօրքեռորդին Եդուարդ
որ ամուսնանայ վաթսուն և հինգ
տարեկան, ցաւագար, ճանկաւոր
քթով Ջըսթանպուրկի դքսուհւոյն
հետ, կին մ'որ արդէն երեք ա-
մուսնոյ գլուխ կերած էր, ամենքն
ալ գերեզման իջած լինելով, ըստ
հանրային ասութեան, նուազմանէ
և ձանձրոյթէ վարակեալ։ Կոմս
Եդուարդ տը Զէսսիթ ալ սոյն կէ-
տին վրայ Օրիորդ տը Քարլիսնի
համոզումն ունէր. այս անձը վեր-
ջին աստիճան հարեւանցի կրթու-
թիւն մ'առած երիտասարդ մ'էր,
վարժարանին մէջ իւր բոլոր ուսածն
էր երդ երգել և էլէէն խաղալ։
Բայց երկու բան ալ կար որ
ինքնիրենը գտած էր, առանց դա-
սատուի և առանց գրքերու օգնու-
թեան. այսինքն ՝ներմ փափաք մը
ամուսնանալու իւր մօրքեռ աղջ-
կանը Քենսթանսին հետ, որ ման-
կամարդ ու գեղեցիկ էր, և հաս-
տատ որոշում մը մինչև իսկ բան-
տին մէջ մեռնիլ քան թէ ամուսնա-
նալու դքսուհւոյն հետ, որ ծեր
ու տգեղ էր։ Ասոնք էին իւր բոլոր
քաղաքական կարծիքներն, որք սա-
կայն իրեն մինչև իսկ թագաւորու-
թիւն մը կորզել տալու բաւական
եղան։

Այն աղնուատոհմ տիկինն որոյ
Եդուարդ նախամեծար կը համա-
րէր մարտիրոսանալն, ծնունդեամբ,
հարստութեամբ և ազդեցութեամբ
Անգլիոյ ամենէն հոյակապ անձնա-
ւորութիւնն էր։ Հարկ չկայ ըսել
թէ քաղաքականապէս Օրիորդ տը
Քարլիսնի ախոյեանն էր։ Մի և նոյն
մարդոյն սիրահարեալ երկու կա-
նանց յանձնէ՝ որ կարթով ձկնոր-
սութեան կանոնագիրը խմբագրեն,
կարելի չէ որ համաձայնին երբէք։
Դքսուհին իւր առնել ուզած երի-
տասարդին դիմադրութիւնը բանի
տեղ չէր դներ, զի կոմսն որք էր
և նորա խնամակալուհին իւր ձե-
ռացը մէջ խաղալիկ եղած արարած
մ'էր. հաչիւ կ'ըներ թէ երբ կոմ-
սը տեսնար որ մէկ կողմը մշտնջե-
նաւոր բանտարգելութիւն, միւս
կողմն ամուսնութիւն կար, հին ա-
տենուան միամիտ աղջկանց վանք
դրուելու սպառնալեաց առջեւ ը-
նտրելու նման՝ անշուշտ տագնապ ու
ջղային ցնցում պիտի ունենար, բայց
ի վերջոյ պիտի հնազանդէր Ամուս-
նանալէ յետոյ՝ դքսուհին յանձն
կ'առնուր զայն նուաճել. նմանօրի-
նակ գործերու մէջ հարկ եղած
փորձառութիւնը տուած էին իրեն
իւր նախընթաց երեք ամուսիններն,
և կոմսն վ-ր-ջ-ն-ն ի վեր գործե-
լու եղանակներն ո՛չ թէ փոխուած
այլ յեղաշրջուած էին միայն։ Դքս-
սուհին մտադիր էր նախ և առաջ
քաղցրութեամբ ու գգուանօք գոր-
ծել, և Բրիտանական կղզեաց ա-
մենանկրող լծակիցն ըլլալ։

Զքեզ պիտի փայփայեմ, համբու-
րեմ, ուտեմ.

Ազատ ես որպէս կամիսդ ընթա-
նալ այնպէս։

Հոգ պիտի տանէր հարստու-
թեան պարգեւած հրապոյրներէն
և ո՛չ մին զանց ընել. ուզածը պի-
տի տար նեմ որպէս ըրած էր առ-
ջի երեքին։ — որոնք չուներ, երի-
վարներ, կերուխում և ճոխու-
թիւն։

Բու մեծ փափաքդ է լինել արի
և առոյգ.
Պիտի լինիս, ապահովեմ քեզ,
լե՛ր ստոյգ։

(Շարունակելի)

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգային Տնտեսական Խորհրդոյ

—=—

Ասկէ առաջ Արաբկիրու վիճակին թեմերէն կռանի անուն դիւղի ազգա-
յին եկեղեցւոյն եւ վարժարանին ի՞նչ-
պատճառ հանգանակութիւն մը կատարել
որոշուած, եւ Պատրիարքարանի կողմէ
1883 նոյեմբեր 5 թուականաւ ժա-
պաւիրեալ տուփար մը յանձնուած էր,
նոյն դիւղացի Սիմիկեան Եւա տիկնոջ։
Այս անգամ Տնտես. Խորհուրդս տեղե-
կանալով յիշեալ տիկնոջ, յայտարարու-
թիւնէն որ, նոյն տուփարը կորսուած է,
եւ յետ քննութեան ստուգելով որ, այս
կորուստն անուշադրութեան արդիւնք
է միայն, պատշաճ դատեց ժապաւին-
եալ նոր տուփար մը յանձնել, հանգա-
նակութիւնը շարունակելու համար։

Հետեւաբար Տնտես. Խորհուրդս
այսու պաշտօնական ծանուցմամբ կը
խնդրէ Պատուարժան Ազգայիններէն,
որ 1883 նոյեմբեր 5 թուականաւ տու-
փարն՝ որ այլ եւս գոյութիւն չունի,
ներկայացուցած ատեն գրաւելով՝ յու-
զարկեն ի Պատրիարքարան, եւ երբ
1884 փետրվար 3 թուականաւ ժա-
պաւիրեալ նոր տուփարը ներկայանայ
այն ատեն իրենց նուէրն յանձնեն, եւ
յորում արձանագրեալ պիտի տեսնեն
նաեւ կորուսեալ հին տուփարին նպաս-
տից հաչիւն։

(Կնք.)

Կ. Պոլիս 10 փետր. 1884

## ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹՐԱՄՎԱՑԻ

Կ. ՊՈԼՍՈՅ

—o—

## ԱԶԴ

Վարչական խորհրդոյ որոշմամբ։
բաժնետերաց սովորական ընդհա-
նուր ժողովն ի նիստ հրաւիրեալ է
շաբաթ օրը, մարտ 17/29, կէս օրէն
2 ժամ յետոյ, ընկերութեան կեդ-
րոնատեղին, Ղասթելար խան, ի
Բերայ—Պաղար։

Ցասը բաժին ունեցող բաժնետ-
երաք, եթէ կը փափաքին ներկայ
գտնուիլ այս ժողովին, պէտք է որ
գումարումէն 10 օր առաջ իրենց
բաժնեթուղթերն ընկերութեան
մնտուկին յանձնեն իբրեւ աւանդ
կամ օտար երկիրներու բաժնետ-
երաց համար, Պ. Պ. Ֆ. Բամսնտ
և ընկերութեան, Փարիզ, Լաֆա-
յէթ փողոց, թիւ 31. (37 րդ յօդ-
ուած հիմնական կանոնագրին)։

Օրակարգն, որոյ վրայ ժողովը
խորհրդակցելու հրաւիրեալ է, հե-
տեւեալ կերպիւ որոշուած է.

1. 1883 դեկտ. 31 ին որոշուած
հաչուոց, հաչուեկշռաց (պիլանչօ) և
գոյից ցուցակներուն, ինչպէս նաեւ
Ղալաթա—Շիշլիի հաչուոց հաւանու-
թիւն։

2. Ընդունիլ վարչական խոր-
հրդոյ այն առաջարկն թէ պէտք է
շահուց գումարն «կառաց և երի-
վարաց բարւոք վիճակի մէջ պահ-
պանման յատուկ դրամագլխոյն»
հաչուոյն վրայ աւելցնել։

3. Վարչական խորհրդոյ երկու
անդամից տեղ ուրիշներ ընտրել,
հիմնական կանոնագրին 18 և 31 րդ
յօդուածոց համաձայն։

Ընդհ. Ցնծրէնութիւն
Կ. Պոլիս 15/27 փետրվար 84

## ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

## ԾԻԱԽՈՏԻ ՇԱՀԱԿՑԱԿԱՆ ՐԷԺԻ

## ԹՈՒՐՔԻՈՑ

—

## ԱԶԴ

Օսմանեան կայսրութեան շա-
հակցական ՐԷԺԻՆ կ'ծանուցանէ հա-
սարակութեան թէ յառաջիկայ ապ-
րիլ 2/14էն սկսեալ ի վաճառ պիտի
հանէ իւր ծխոցոյ, էլիքէրի և էքս-
թրաթ այլ և այլ տեսակներն, հետեւ-
եալ գիներով, մինչեւ 19 դրչէն
վճարելի։

### ԾԽԱԽՈՑ

| | | |
|---|---|---|
| Ա. տեսակ. էլը 190 | | ղրշ. |
| 1000 | կրամնոց տուփն | 190 |
| 500 | „ | 95 |
| 250 | „ | 47 1/2 |
| 100 | „ | 19 |
| 25 | „ ծրարն | 4 3/4 |
| Բ. տեսակ. էլը 120 | | ղրշ. |
| 1000 | կրամնոց տուփն | 120 |
| 500 | „ | 60 |
| 250 | „ | 30 |
| 100 | „ | 12 |
| 25 | „ ծրարն | 3 |
| Գ. տեսակ. էլը 60 | | ղրշ. |
| 1000 | կրամնոց տուփն | 60 |
| 500 | „ | 40 |
| 250 | „ | 15 |
| 100 | „ | 6 |
| 25 | „ ծրարն | 1 1/2 |
| Դ. տեսակ. էլը 40 | | ղրշ. |
| 250 | կրամնոց տուփն | 10 |
| 25 | „ ծրարն | 1 |
| Ե. տեսակ. էլը 24 | | ղրշ. |
| 31 1/4 | կրամնոց ծրարն | 30 փրդ. |
| Զ. տեսակ. էլը 16 | | ղրշ. |

Այս տեսակը մի միայն գիւղ-
երից մէջ պիտի վաճառուի։

| | | |
|---|---|---|
| 21 1/4 | կրամնոց ծրարն | 20 փրդ. |

—

### ՍԻԿԱՐԷԹ

| | | |
|---|---|---|
| Ա. տեսակ (Զբվանալը) | | դրշ. |
| 500 | հատնոց տուփը | 140 |
| 100 | „ | 28 |
| 25 | „ | 7 |
| (Զբվանասը) | | |
| 500 | հատնոց տուփը | 150 |
| 100 | „ | 30 |
| 25 | „ | 7 1/2 |

## ԹԵՐԹՕՆ ՄԱՍԻՍԻ

(86)

ԷՖԹՈՐ ՄԱԼՈՑ

—o—

## ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

—=—

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

7.

ՆՈՒԱԳԱԾՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

բաւական չէր կով մը գնելու համար։ Ո՛րչափ աւելի
ստակ ունենայինք, ա՛յնչափ կովը դեղեցիկ պիտի լի-
նէր. ո՛րչափ կովը դեղեցիկ լինէր, ա՛յնչափ Մայր Պար-
պէրէն ուրախ պիտի լինէր. և ո՛րչափ Մայր Պարպը-
ռէն ուրախ լինէր, ա՛յնչափ մեք ալ մեր կողմէ հաճոյք
պիտի զգայինք։

Պէտք էր ուրեմն դէպի Բիէրմոն ուղղուիլ։

Փարիզէն վառս եկած ժամանակ, Մաթիայի կըր-
թութիւնն սկսած էի՝ ընթերցում և երաժշտութեան
սկզբնատարերքն ուսուցանելով անոր. վառսէն մինչեւ
Բիէրմոն շարունակեցի դասատուութիւնս։

կա՛մ ես լաւ դասատու մը չլինելով, — որ շատ կա-
րելի է, — կա՛մ Մաթիա լաւ աշակերտ մը չլինելով,
— որ նոյնպէս կարելի է, — սա ստոյգ է թէ ընթերց-
ման մէջ յառաջդիմութիւնն յամր և դժուարին եղաւ,
ինչպէս որ արդէն ըսած եմ.

Մաթիա եռանդով կ'աշխատէր և աչքը դրքին վը-
այեն չէր դներ. շատ մը քմածին բաներ կը կար-
դար, որ առաւել իւր երեւակայութեան պատիւ կը
բերէին քան թէ իւր ուշադրութեան։

Այն ժամանակ երբեմն համբերութիւնս հատնե-
լով, դրքին կը դարձնէի, և բարկութեամբ կը դոչէի թէ
ստուգիւ չատ կարծր գլուխ ունէր։

Առանց նեղանալու, իւր խոշոր քաղցր աչերով ինձ
կը նայէր, և ժպտելով.

— Ճշմարիտ է, կ'ըսէր, երբոր զարնեն այն ժա-
մանակ կը կակուղնայ. կառոֆոլի, որ աւանակ չէր,
չուտով գտած էր զայս։

Ի՞նչպէս կարելի էր բարկացած մնալ այս պատաս-
խանին առջեւ։ Կը ծիծաղէի և դասը կը շարունա-
կէինք։

Բայց երաժշտութեան մէջ նոյն դժուարութիւնները
չէին ներկայանար. սկիզբէն Մաթիա զարմանալի յա-
ռաջդիմութիւն ըրած էր, այնպէս որ՝ շատ չանցած
գիս կը հիացնէր իւր ըրած հարցումներով. և հիացը-
նելէ յետոյ, կը շփոթեցնէր զիս և մինչեւ իսկ կարճ
կապելու կը հարկադրէր։

Կը խոստովանիմ որ այս բան շատ ծանր կը դպչէր
ինձ, վասն զի զիս ճշմարիտ վարժապետի մը տեղ
դրած էի, և մեծ ամօթ կը համարէի ինձ որ աշա-
կերտս հարցումներ ընէր և ես չկրնայի պատասխան
տալ. կը թուէր ինձ թէ մինչեւ մէկ աստիճան քաշ-
քշուք էր ըրածը։

Անդադար հարցումներ կ'ընէր ինձ աշակերտս.

— Ինչո՞ւ համար երաժշտութիւնը մի և նոյն բա-
նալիի վրայ չեն գրեր։

— Ինչո՞ւ համար վեր եղած ժամանակ «էեւ» կը գոր-
ծածեն և վար իջած ժամանակ «էմ»։

— Ինչո՞ւ համար հատուածի մը առաջին և վերջին
չափերն ամեն անգամ կանոնաւոր ամանակի թիւը
չեն ունենար։

— Ինչո՞ւ համար ջուրթակ մը քանի մը ձայներու վրայ
կը ներդաշնակէն և ոչ այլոց։

Այս վերջին հարցման պատասխանած էի ծանրու-
թեամբ թէ ջուրթակն իմ նուագարանս չլինելով, երբէք
զբաղած չէի գիտնալու թէ ի՞նչպէս պէտք էր կամ
պէտք չէր ներդաշնակել, և Մաթիա պատասխան չէր
ունեցած տալու։

Բայց օձիքս ազատելու այս ձեւը չէր կրնար յար-
մարիլ դժուարի կամ բանալիի վերաբերեալ հարցմանց,
որք երաժշտութեան տեսականին կը պատկանէին պար-
զապէս. երաժշտութեան վարժապետ էի, պէտք էր՝
կա՛մ պատասխանել, կամ իմ վարժապետական իշխա-
նութիւնս ու արժանապատուութիւնս կորուսանել. քա-
ղ կ'զգայի զայս. արդ, ես չէի ուզեր կորուսանել իմ
իշխանութիւնս ու արժանապատուութիւնս։

Այն ժամանակ, երբոր չէի գիտեր ինչ պատասխան
պէտք էր տալ, գասպար հօրեղբօր ըրածը կ'ընէի, որ
երբ կը հարցնէի իրեն թէ ի՞նչ է հանքային ածուխը,
վստահութեամբ կ'ըսէր ինձ. հողին մէջ գտնուած ա-
ծուխ է։

Ես ալ ոչ նուազ վստահութեամբ կը պատասխանէի
Մաթիայի հարցմանց, երբոր պատասխան մը չունէի
տալու.

— Այդպէս է, որովհետեւ այդպէս պէտք է լինի,
այդ է օրէնքը։

Մաթիա օրէնքի մը դէմ ապստամբելու բնաւորու-
թիւն չունէր, միայն տեսակ մը նայուածք կ'արձակէր
իմ վրայ՝ բերանն ու աչերը բանալով, որ բնաւ պատ-
ուաբեր չէր ինձ համար։

Երեք օրէ ի վեր մեկներ էինք վառսէն, այս տե-
սակ խնդիր մ'առաջարկեց ինձ. փոխանակ «չեմ դի-
տեր» պատասխանելու, ազնուաբար ըսի. «վասն զի
այդպէս է։»

Այն ժամանակ մտահոգութեան մէջ ինկած երեւ-
ցաւ, և օրն ի բուն չկրցի խօսք մ'առնուլ բերնէն, որ
յոյժ արտասովոր բան մ'էր անոր համար, վասն զի
խօսիլ խնդալ շատ կը սիրէր։

Այնչափ ստիպեցի որ վերջապէս խօսիլ սկսաւ։

— Արդարեւ, դու լաւ դասատու մ'ես, ըսաւ, և
կը հաւատամ թէ ոչ ոք կրնար քեզ պէս ինձ սովրե-
ցընել՝ ինչ որ ուսայ. սակայն. . .

Կանգ առաւ։

— Սակայն ի՞նչ։

— Սակայն, բաներ կան թերեւս զորս դու չես գի-
տեր. այս բան ամենէն գիտուններուն իսկ կը պատա-
հի, այնպէս չէ՞։ Ուստի երբոր ինձ կը պատասխանես,
«այդպէս է, որովհետեւ այդպէս է,» կան թերեւս
ուրիշ փաստեր որ կրնան տրուիլ և դու չես տար ո-
րովհետեւ քեզ ալ տուած չեն։ Այսպէս խորհրդածե-
լով ըսի մտօքս որ՝ եթէ ուզէիր, կրնայինք թերեւս
գնել ածան գնով գիրք մը, ուր բացատրուած լինի
երաժշտութեան սկզբունքը։

— Իրաւունք ունիս։

— Այնպէս չէ՞։ Ես ալ կը խորհէի թէ իրաւունք
պիտի տայիր ինձ, վասն զի վերջապէս չես կրնար գիր-
քերու մէջ եղած ամեն բան գիտնալ, որովհետեւ գիր-
քերու մէջ ուսած չես։

— Լաւ վարժապետ մը լաւ գրքէ մ'աղեկ է։

— Այդ ըսածդ զիս կը պարտաւորէ ուրիշ բան մ'ալ
քեզ ըսելու. եթէ ուզես, երթամ դաս մ'առնում
երաժշտութեան քաջահմուտ վարժապետէ մը, մէկ
դաս մը, և չգիտցածներս անոր հարցնելով ուսնիմ։

— Ինչո՞ւ այդ դասը չառիր քաջահմուտ վարժա-
պետէ մը, երբոր մինակ էիր։

— Վասն զի ճշմարիտ վարպետները ձրի դաս չեն
ասար, և ես չուզեցի դասին գինը քու դրամովդ վը-
ճարել։

Մաթիայի ըրած «ճշմարիտ վարպետ»ի խօսքը վի-
բաւորած էր զիս, բայց իմ անմիտ սնափառութիւնս
չկրցաւ դիմանալ անոր վերջին խօսքին։

— Դու շատ բարի տղայ մ'ես, ըսի անոր. իմ
դրամս քունդ է, որովհետեւ դու ալ ինձ պէս և շատ
անգամ ինձմէ աւելի կը վատկիս. քանի՞ դաս կ'ու-
զես՝ ա՛ռ, ես ալ քեզ հետ կ'առնում։

Յետոյ քաջարար իմ տգիտութիւնս խոստովանեցայ
աւելցնելով.

— Այսպէս ես ալ կրնամ չգիտցածս ունիլ։

Մեզ պէտք եղած վարժապետը, ճշմարիտ վար-

(Շարունակելի)

Բ. տեսակ

| | | |
|---|---|---|
| 500 | հատնոց տուփը | 90 |
| 100 | „ | 18 |
| 25 | „ | 4 1/2 |

Գ. տեսակ

| | | |
|---|---|---|
| 500 | հատնոց տուփը | 50 |
| 100 | „ | 10 |
| 25 | „ ծրարը | 2 1/2 |

Դ. տեսակ

| | | |
|---|---|---|
| 500 | հատնոց տուփը | 35 |
| 25 | „ ծրարը | 1 3/4 |

Ե. տեսակ

| | | |
|---|---|---|
| 500 | հատնոց տուփը | 20 |
| 25 | „ ծրարը | 1 |

—

ՔԹԱԽՈՏ

| | | |
|---|---|---|
| 1000 | կրամնոց տուփը | 120 |
| 50 | „ ծրարը | 6 |

Բոբէ տը փուէ, տէլ՝ 80 ղրուշ

| | | |
|---|---|---|
| 250 | կրամնոց տուփը | 20 |
| 50 | „ ծրարը | 4 |

Ընդհ. Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, 16|28 յունվ. 1884

## ԱԶԴ

Թուրքիոյ ծխախոտի Ռէժիէի վարչական խորհուրդը կը ծանուցանէ հասարակութեան թէ Ռէժիէի ընկերութիւնը 1884 ապրիլ 2|14 ին գործի պիտի ձեռնարկէ։

Կ. Պոլիս 11|23 յունվ. 1884

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԿԷՐԻ

## ԻԼԱՆ

Իքինճի օրտուլի Հիւմայունի մերքէղի օլան Էտիրնէ իլէ Մուսթաֆա փաշա վէ Գըրգ—Քիլիսէ վէ Թրնովաճքը, Լիւլէ Պէրղոս, Տիմոթիքա, Օրլմաքէոյ, Կիւմիւլճինա, Էսկիճէ, Կէլիպոլու, Քէշան վէ Մալղարատա պուլունան վէ պուլունտուրուլմաղ օլան ասքերի շահանէնին իչ եիւզ սէնէի բուսիյէսի մարտընտան ազոսթոս Նիհայէթինէ գատար ալթը այլըգ նան մուայէնաթը վէ հայվանաթը միրիյէ իչուն մուգթազի արփա մէվքիի միւնագասայա գոնուլարագ իչպու շուպաթը բուսինին 20 ինճի կէնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն կէլէն Նիսմունէսի վէճճ իլէ իթայա թալիպ օլան վէ չերայիթի աղնամագ իսթէյէնլէրին եէվմը մէգիբէ գատար լեվազիմաթը ուսումիյէ տայրէսինէ կէլմէլերի։

11 շուպաթ 1299 2

## ԻԼԱՆ

Նիզամիյէ թահնիյէ իտարէսի իչուն մահֆուզ նումունէսի վէ շէրայիթի մուգարրէրէսի վէչհ իլէ 3600 գըյէ Տօն եաղը միպայաա օլունաճաղընան, իթայէ թալիպ օլան վէ չերայիթի աղնամագ իսթէյէնլէրին լեվազիմաթ ուսումիյէ տայրէսի իքինճի շիւպէսինէ կէլմէլերի։

13 շուպաթ 1299 3

ՏՕԲԹ. Մ. Հ. ՄԻՆԱՍԵԱՆ

Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թէ երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը հիւանդ պիտի ընդունի իւր տունն Այնալը-Զէշմէ, Էմին-Ճամի փողոց թիւ 45 կէս օրէն վերջը։ Պիտի գտնուի նաեւ Պոյոյ կողմը Լայէլի ճամիի դիմաց թիւ 15, Պլահվէրտեան նոր բացուած դեղարանն երկուշաբթի եւ ուրբաթ կէս օրէն վերջը, եւ չորեքշաբթի առտու ժամը 4էն մինչեւ 8ը։

Տոքթ. Մինասեան ձրիաբար պիտի խնամէ աղքատ հիւանդները ուրբաթ օրերը Ալլահվէրտեան դեղարանը եւ շաբաթ օրերը իւր տունն 6 էն մինչեւ 10։ 50—46

VICHY

ՎԻՇԻ

Վաչը-ռիւն, փուլիզ 22 Պուլվ. Մոնմարթր.

PASTILLES DIGESTIVES. — Վիշիի աղբիւրներէն հանուած աղերէն շինուած։ Այս բասթիլներն ախորժահար են և ստամոքսի թթուութեանց և դժուարամարսութեանց դէմ շատ ազդու։

SEL DE VICHY POUR BAINS. — Բաղնիքի համար ծրար մը աղ բաւական է այն անձանց համար որք Վիշի չեն, կարող երթալ։

Կեղծերէն զգուշանալու համար պէտք է ԲԱՆԵՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրոշմը բոլոր արտադրութեանց վրայ փնտռել։

Պոյոյ ամեն դեղագործաց և դեղավաճառաց քով կը գտնուի։

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Ուր կանոնաւորապէս կը բանին Լէլէբուլէ և Մէյէրիւլանի ճեմ։

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ալճէրիան | 2,500 | Ֆավնիան | 3,700 |
| Ալ զասիան | 2,500 | Ֆլոմինիան | 3,700 |
| Անդալուզիան | 2,500 | Ֆլավիան | 3 700 |
| Արէնեան | 2,500 | Իսպէրիան | 5,500 |
| Աբասիան | 3,700 | Իլլէրիան | 5,500 |
| Պավլիան | 6,000 | Իսպրիան | 5,500 |
| Պուլիրիան | 6,000 | Լէսպիան | 2,200 |
| Քոմոդեան | 800 | Լիկուրեան | 2,500 |
| Սայրենեան | 2,000 | Լեսպոս | 800 |
| Տորոյ | 700 | Օքսրին | 700 |
| Էճէքէլ | 3,700 | Բէրիան | 3,800 |
| Ֆաղէան | 3,700 | Վալենիան | 6,800 |
| Ֆալերնիան | 3,700 | Վէրճինեան | 6,800 |

Ալճէրիան չոգենաւն յառաջիկայ այսօր Լիվրբուլ պիտի երթայ։

Լիւբիան չոգենաւը, նաւապետ Ֆըլէմինկ, մարտ 2ին աստ կ'սպասուի։

Շաբաթական չոգենաւներու նոր դիծ մը հաստատեցաւ Լիվրբուլի եւ Պոսդընի միջեւ, եւ ստորագրեալս հեղուկէ դատ ուրիշ վաճառք կ'ընդունի օրինաւոր սակագներով։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԴԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միսէլի խան, Ղալաթիա

Նաւատեարք, Պարոնայք Ֆրէտ. Էյլանտ եւ ընկ. Լիվրբուլ

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՈՒ

ԸՆԴ ԴԷԼ ԱՆԴԷԼՈՅ, Կ. Պոլսոյ և Օրէասյի

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՐ ԵՒ ԸՆԿ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ալճանդ | 2,000 | Լէբանոր | 4,500 |
| Ամէրը | 3,000 | Մարէնկ | 4,300 |
| Արէս | 1,300 | Մարսիլ | 2,500 |
| Պասան | 3,500 | Մէրը | 2,000 |
| Պորտիս | 2,200 | Նէրթ | 2,000 |
| Պլավ | 2,000 | Օրէնը | 5,000 |
| Գէյրդ | 2 600 | Օբլանդ | 3,000 |
| Գուլէթա | 2,500 | Դրէսնդ | 4,500 |
| Գամբ | 2,100 | Դրէտ | 2,000 |
| Գարդ | 2,000 | Բուէնֆլէթ | 1,200 |
| Գոմ | 2,700 | Բուլբոն | 3,200 |
| Տէլտ | 2,500 | Բանդէր | 1,700 |
| Տոմնա | 1,800 | Բիրդ | 2,800 |
| Տրուտ | 2,600 | Ռիուդ | 4,400 |
| Էրադ | 2,600 | Ռիալդ | 3,200 |
| Ֆանտ | 800 | Լոնը | 3,000 |
| Ֆէրտ | 1,700 | Ռոմանա | 5,500 |
| Ֆլամինկ | 1,600 | Ռոմէ | 3,500 |
| Կալիկոս | 3,500 | Սալերնա | 4,000 |
| Կէրտան | 2,200 | Սաֆֆ | 2,000 |
| Կոզ | 1,800 | Սէլլէ | 2,000 |
| Կրոտոն | 2,200 | Սէրենդ | 4,300 |
| Հանկ | | Թասոս | 1,200 |
| Հէրտ | 2,000 | Թ. Ռէլլան | 3,000 |
| Հէրոլէ | 3,000 | Թիլիէր | 1,300 |
| Հէմպէրդ | 1,200 | Թուլտա | 2,800 |
| Ճէնա | 2,300 | Քանդէ | 3,600 |
| Քիլլա | 2,000 | Եէրտա | 3,600 |
| Քոմա | 2,200 | Զէրտ | 1,000 |
| Լէս | 2,000 | Զէրտ | 140 |

Պասան չոգենաւը Լիվրբուլէն եկաւ եւ Օտէսա դնաց։

Եէրտա չոգենաւն այս շաբթու Անգլիայէն պիտի մեկնի Կ.Պոլիս գալու համար։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԵՐԻՔ ՀԻԼՏ
Գործակալ
Թիւ 17–18, Քիւչիւք Միսէթ խան
Ղալաթիա։

ԲԱԲԱՅԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լէլէբուլէ, Մէյէրիւլանի և Օրէասյի ճեմերու կանոնաւորապէս բանող

ՇՈԳԵՆԱՒՈՒ

| Անուանք | Թոնոյ | Նաւապետք |
|---|---|---|
| Այա Սոֆիա | 3,000 | Պրքա |
| Աբբաս | 2,500 | Ռոճրբա |
| Աբբասիա | 2,500 | Քրուիքշանք |
| Լափանիա | 2,500 | Ուիլքա |
| Մահմուտիա | 3,500 | Մարշ |
| Բոսֆոր | 2,800 | Ֆօթրբիլ |

Մահմուտիա չոգենաւը փետր. 29ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի։

Այս չոգենաւք կին գամբարներ ալ ունին։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու եւ Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն եւ հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ

ԱՐԵՒԵԼԵԱՆ



ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻԻՋԻՒՔ—ՋԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ 20 Հ.Յ. (Ն. Տ.) 1883, գնալ- ցնոր գնօրէնութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻԻՋԻՒՔ—ՋԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՅ

| ԿԱՅԱՐԱՆՔ | 4 | 2 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | 26 | 28 | 30 | 32 | 34 | 36 | 38 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաւօտ | | | | | | | | | | | Իրիկուն | | | | | | | |
| | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. |
| Կ. Պոլիս ..... Երթ | 6 21 | 7 15 | 7 43 | 8 14 | 8 43 | 9 12 | 9 42 | 10 20 | 10 39 | 11 17 | 11 50 | 2 9 | 2 41 | 3 17 | 3 52 | 4 29 | 5 2 | 5 32 | 6 9 |
| Գում-գարու ..... | 6 32 | 7 27 | 7 54 | 8 25 | 8 54 | 9 23 | 9 53 | 10 30 | 10 49 | 11 28 | 12 1 | 2 20 | 2 52 | 3 28 | 4 3 | 4 40 | 5 13 | 5 43 | 6 20 |
| Եէնի-գարու ..... | | | 7 58 | | 8 58 | | | 10 34 | 10 53 | 11 32 | 12 5 | 2 24 | 2 56 | 3 32 | 4 7 | 4 44 | 5 17 | 5 48 | 6 25 |
| Տավուտ փաշա ..... | | | 8 1 | | | | | | 10 56 | 11 35 | 12 8 | 2 27 | 2 59 | 3 35 | 4 10 | | 5 20 | | 6 28 |
| Սամաթիա ..... | | | 8 6 | | 9 4 | | | 10 40 | 11 1 | 11 40 | 12 13 | 2 32 | 3 4 | 3 40 | 4 15 | 4 50 | 5 25 | 5 55 | 6 34 |
| Եէտի-գուլէ ..... | 6 42 | 7 41 | 8 12 | 8 33 | 9 10 | 9 31 | 10 1 | 10 44 | 11 4 | 11 45 | 12 16 | 2 36 | 3 9 | 3 47 | 4 19 | 4 57 | 5 29 | 6 2 | 6 40 |
| Գաղաը-Զէշմէ (Պալըգալը) ..... | 6 46 | | 8 16 | | 9 14 | | | | | | | | | 3 51 | | | | | |
| Մաքրիգիւղ ..... | 6 54 | 8 | 8 25 | | 9 23 | | | 10 57 | | 11 58 | | | 3 20 | 4 1 | | 5 10 | | 6 15 | 6 51 |
| Այա-Սթէֆանոս ..... | | 8 14 | 8 36 | | 9 33 | | | 11 8 | | 12 10 | | | | 4 12 | | 5 21 | | 6 28 | |
| Քիւչիւք-Զէքմէճէ .... Ժամնում | | 8 25 | | | | | | | | 12 19 | | | | | | | | 6 37 | |

ՔԻԻՋԻՒՔ—ՋԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՅ

| ԿԱՅԱՐԱՆՔ | 5 | 7 | 9 | 11 | 13 | 15 | 17 | 19 | 21 | 23 | 25 | 27 | 29 | 31 | 33 | 35 | 37 | 39 | 1 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաւօտ | | | | | | | | | | | Իրիկուն | | | | | | | |
| | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. |
| Քիւչիւք-Զէքմէճէ ..... Երթ | | | 7 35 | | | | | | | | | 1 59 | | | | | | | 6 38 |
| Այա-Սթէֆանոս ..... | | | 7 46 | | 8 42 | | 9 38 | | | 11 17 | | 2 10 | | | | 4 28 | | 5 34 | 6 51 |
| Մաքրիգիւղ ..... | 6 30 | 7 23 | 7 58 | | 8 54 | | 9 49 | | | 11 30 | | 2 23 | | 3 31 | | 4 41 | | 5 47 | 7 5 |
| Գաղաը-Զէշմէ (Պալըգալը) ..... | | 7 32 | | | 9 3 | | | | | 11 39 | | 2 32 | | 3 40 | | 4 50 | | | |
| Եէտի-գուլէ ..... | 6 44 | 7 37 | 8 11 | 8 38 | 9 9 | 9 37 | 10 2 | 10 12 | 11 12 | 11 45 | 2 4 | 2 37 | 3 12 | 3 47 | 4 24 | 4 57 | 5 34 | 6 2 | 7 26 |
| Սամաթիա ..... | 6 49 | 7 42 | 8 15 | 8 42 | 9 13 | 9 41 | | 10 16 | 11 16 | 11 49 | 2 8 | 2 41 | 3 16 | 3 51 | 4 28 | 5 1 | | 6 6 | |
| Տավուտ փաշա ..... | 6 54 | | | 8 47 | | 9 46 | | 10 21 | 11 21 | 11 54 | 2 13 | 2 46 | 3 21 | 3 56 | 4 33 | 5 6 | | 6 11 | |
| Եէնի-գարու ..... | 6 58 | 7 48 | 8 21 | 8 50 | 9 19 | 9 49 | | 10 24 | 11 24 | 11 57 | 2 16 | 2 49 | 3 24 | 3 59 | 4 36 | 5 9 | | 6 14 | |
| Գում-գարու ..... | 7 3 | 7 53 | 8 26 | 8 55 | 9 24 | 9 54 | 10 11 | 10 29 | 11 29 | 12 2 | 2 21 | 2 54 | 3 29 | 4 4 | 4 41 | 5 14 | 5 44 | 6 19 | 7 40 |
| Կ. Պոլիս ..... Ժամնում | 7 12 | 8 2 | 8 35 | 9 4 | 9 33 | 10 3 | 10 19 | 10 38 | 11 38 | 12 11 | 2 30 | 3 3 | 3 38 | 4 13 | 4 50 | 5 23 | 5 53 | 6 28 | 7 50 |

Ծանօթ. — 1. Գաղաը-Զէշմէ հանդիպող կառախմբերն առժամանակեայ են.— Խոքը ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարներն Պոլսէն Մաքրիգիւղ կամ աւելի հեռի կայարաններու միջեւ բանող կառախմբոց մէջ։

ՔԻԻՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Ուր տոքը տանի մանրամասն կը բանին Լէլէբուլէ և Մէյէրիւլանի ճեմերու

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Օրանիա | 7,000 | Մալթա | 3,000 |
| Ադրիա | 3,000 | Մորոտոս | 2,500 |
| Ալբէրթ | 3,000 | Նանթ | 2,500 |
| Պորնիա | 4,600 | Բաւանիա | 5,000 |
| Պարվիլիա | 3,800 | Բարիզ | 3,200 |
| Պուլուտ | 2,500 | Բաստիա | 3,000 |
| Գրիմնիզ Քոմբ | 1,200 | Սեբիլիա | 7,800 |
| Սեգիլանիա | 5,000 | Սէրթ | 4,600 |
| Քարթաղենիա | 4,700 | Սարիսոսա | 3,000 |
| Շերպուրկ | 2,000 | Սամսիա | 3,000 |
| Տեվերոս | 2,500 | Սէրտ | 3,000 |
| Կուլիա | 4,000 | Թրիէնա | 3,000 |
| Քեպրա | 2,500 | Թրինիտատ | 2,500 |
| Մարսէյ | 3,000 | | |

Մորոտոյ չոգենաւը, նաւապետ Քէյ, ամսոյս 24ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի։

Ստորագրեալս արտօնութիւն ունի ճանբորդ եւ վաճառք ընդունիլ Նիւ Եորքի եւ Պոսդընի, ինչպէս նաեւ Միացեալ-Նահանգաց ուրիշ կողմերուն համար օրինաւոր սակագներով։

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ, Գործակատար.
Թիւ 1 Քիւչիւք Հալիլ փաշա խան
Ղալաթիա։

ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ եղական գարման է հերաց ամեն տեսակ դժուարութեանց և սոյն նպատակին համար ծախսուած ուրիշ բաղադրութիւններէ առաւել գոհ կ'ընէ գործածողները։ Մանաւանդ իգական սեռի գործածութեանն համար անհրաժեշտ է այս, քան զի կ'առաստացնէ ու մետաքսանման փայլուն և կակուղ կ'ընէ գլխու կարծր մազը։ Որ եւ է պատճառաւ գունաթափ եղածը անվրէպ իր նախկին գոյնին կը վերադարձնէ. անհաստատ մազը կը վերահաստատէ, թափածին տեղ նոր մազ կը բուսցնէ եթէ արմատը փճացած չէ (քանզի բնութեան մէջ ոչինչ կարող է մազ բուսցնել երբ արմատը փճատած է), գլխուն ճերմակ թելերը շուտով կ'անհետացնէ։ Միով բանիւ բնական ու փայլուն մազի առատութեամբ գլխոյն զարդարելովը գործածողը խիստ վայելչադէմ կերպարանք մը կ'ստանայ։ Մայրաքաղաքիս մէջ և այլ տեղեր բազմաթիւ գործածողք այսպէս կը վկայեն։ Անուշահոտ ջուր մ'է, չիշը կանանչ թուղթի մէջ ամփոփեալ է. դեղավաճառք և այլ շատեր կը ծախեն։ Այլերի Վիկօրը հարցնել պէտք է։ Գլխաւոր տեղին է Մինասեանի Ամերիկեան վաճառատունն ի Ղալաթիա կոստանդնուպոլսոյ։

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լէլէբուլէ և Մէյէրիւլանի ճեմերու շոգենաւ

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Քանոբոս | 4,200 | Ուլէրթ | 3,000 |
| Ֆարս | 4,000 | Նէրթիա | 3,000 |
| Օսմանլի | 4,000 | Բէր | 3,000 |
| Սէսոստրիս | 3,250 | Դէլանդէ | 1,700 |
| Թեպէ | 3,250 | Լոդիս | 800 |
| Մակասար | 3,250 | Օլինդա | 800 |
| Նէր | 3,250 | Սէնէլ | 750 |
| Մարիոնիա | 3,250 | | |

Բէր չոգենաւը, նաւապետ Ֆօրէսթը մարտ 3ին Սուլինանէն մայրաքաղաքս գալով Լիվրբուլ պիտի երթայ Ալէքսանտրիա հանդիպելով։

Վերոյիշեալ չոգենաւք չքեղապէս յարդարուած են ճանբորդներու համար

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈՒ եւ ԸՆԿ.
Գործակատար
Մէյմանլըգ սոգագ, Պոլիս

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ, Լիվրբուլ,

ՃԷՑՄՍ ՄՈՍ եւ ԸՆԿ.
31, Ճէյմս Սթրիդ, Լիվրբուլ

Գործակալներն.

| | |
|---|---|
| Ալէքսանդրիա | Ռ. Ճ. Մոս եւ Ընկ. |
| Պէրութ | Ց. Բաթթարաքի |
| Կ. Պոլիս | Ց. Վ. Ուիթոլ եւ Ընկ. |
| Դարդանել | Ֆրանք Քալվերթ |
| Ճիպրալթար | Սմիթ, Իսոս եւ Ընկ. |
| Մալթա | Սմիթ եւ Ընկ. |
| Իսքէնտէրուն | Լէվի, Ֆրանք եւ Ընկ. |
| Զմիւռնիա | Պ. Ռ. Ուիթալ եւ Ընկ. |
| Շիրա | Ն. Ռ. Բէդրոբուլոյ |

Ն. ԲԱՔԷ ԷՆԷ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մարսիլիայէ Լիոնիէ ճեմերու կանոնաւորապէս բանող

Մեկնում Մարսիլիայէն ամեն տասն եւ հինգ օրն անգամ մը չորեքշաբթի օրերը։

Ուղղակի և արագ ուղեւորութիւն

Տրապզոն, Պաթում եւ Բոսֆ պիտի երթայ Լ'Աւրիէ շոգենաւն, որ փետր. 27ին Մարսիլիայէն եւ մարտ 5ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Լ. Մէնրիէլ շոգենաւն փետր. 28ին Մարսիլիա պիտի երթայ։

Նաւուղղեալ, ուղեւորութեան եւ այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՈԹԷ ԲԸՊՈՒԼ
Մոմհանէ փողոց, թիւ 141

ԴԵՂԱՐԱՆ ԷՐՃԻԵԱՄ

ԵՒ ԶԿԱՆ ԻՒՂԻ ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅ

Եէնի ճամի Բօսթանճէին դիմացը 12 թուով Դեղարանն այս անգամ Դեղարան Էրճիեաս անունով կը շարունակուի. ու մօտերս Նորվեկիացի ամենաընտիր ձկան իւղէն մեծ քանակութեամբ բերուած ըլլալով՝ օխաչով ու տակառով կը ծախուի. նաեւ այլ եւ այլ ընտիր քսենաքներ (ֆին շամպաներ) հատով եւ մանուկով կը տրուի։

Ցիշեալ Դեղարանն ամեն օր Տօք. Տատրբեան առտուները եւ Տօք. Այվազեան էֆէնտին կէսօրէն մինչեւ իրիկուն կը գտնուին։ 61

ՈՒԷՍԴՔՕԴ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Ուր կը բանին է ՔԷԼ Լոնդոն և Աբերտիլան Նաւահանգիստ, Սեա Ծովա և Դանուբ

Շոգենաւք Լոնտոնէն կանոնաւորապէս կը մեկնին Կ. Պոլիս, Օտէսա եւ Դանուբ երթալու համար, եւ օրինաւոր սակագներով վաճառք կը փոխադրեն Եւրոպայէն Արեւելից եւ Սեւ ծովու բոլոր նաւահանգիստները։

Ամբոս շոգենաւն, նաւապետ Ուէսդքոդ, Անվէրս եւ Լոնտոնէն մեկնելով Մալթա, եւ Շիրա հանդիպելով մայրաքաղաքս եկաւ Օտէսա երթալու համար։

Ճոհն Տիւոքն շոգենաւ փետր. 8ին Լոնտոնէն մեկնեցաւ եւ իւր բեռը ստամպարկէլ յետոյ Պաթում պիտի երթայ։

Լոնտոնի մէջ բեռ կառնուն.

Օրէս շոգենաւը, նաւապետ Բէկտըն, Լոնտոնէն մեկնելով ստամպուլ Օտէսա երթալու համար։

Պէրէլ շոգենաւը, նաւապետ Ուինչիթ, փետրվար 23ին մեկնեցաւ Դանուբ երթալու համար։

Էճէբէ շոգենաւը, նաւապետ Ռիվի, փետրվարի վերջը Լիվրբուլէն ստամպուլ կ'սպասուին։

Բրն շոգենաւը, նաւապետ Ճօնէս, Սեւ ծովէն մայրաքաղաքս պիտի գայ Լոնտոն եւ Անվէրս երթալու համար։

Աւելի մանրամասնութիւններ եւ գնոց վրայ տեղեկութիւն ստանալու համար դիմել առ

ՄՈՐԴԸՆ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ
Ղալաթիա, Կ. Պոլիս

կամ առ ՈՒԷՍԴՔՕԴ ԵՒ ԼՈՐԱՆՍ
9, Ֆէնչըրչ Սթր. Լոնտոն.

## ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՓՈՐՍԱ

Ղալաթիա 15 փետր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ

(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

| | | |
|---|---|---|
| Լոնտրա 3 ամիս, ղրշ. | 110,15 | առ Անգլ. լիր. |
| Փարիզ 3 » ֆր. | 22,30 | առ Օսմ. լիր. |

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

| | |
|---|---|
| Օսմ. Քոնս. գոցուեցաւ բացուեցաւ | 9,29 |
| | 9,28 |
| կէս օրին | 9.28 |
| Եգիպտ. միաց. բաց ոսկի | 74, 17 |

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

(Օսմ. ոսկին 100 ղրշէն) Ղրշ

| | |
|---|---|
| Անգղիական ոսկի | 110 19 |
| Գաղղիական » | 87 30 |
| Բօլ | 90 8 |
| Գրիմից | 81 20 |
| Գաւաղան թուղթ (գաբիք) | 930 |
| » արծաթ (նոր) | 89 10 |
| Մէճիտիէի տարբերութիւն | 107 39 |
| Վեցնոց | 103 |
| Վինգնոց | 102 30 |
| Թէնգիզ | 100 20 |

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՍԱ

Լոնտրա 26 փետր.

| | |
|---|---|
| Անգղ. Քոնս. | 101 7/8 |
| Օսմ. » | 8 3/4 |
| Փոխ. 1865 | 11 |
| » 1869 | 9 3/4 |
| » 1871 | 67 |
| » 1872 | 16 1/2 |
| » 1873 | 8 7/8 |
| » 1877 | 77 3/4 |
| Պանք Օթօման | 15 5/8 |
| Ռուս. փոխ. 73ի | 87 7/8 |
| Եգիպտ. միացեալ | 66 1/8 |
| » արտօնեալ | 90 1/8 |
| Տայրա Սանիէ | 67 1/2 |
| Փոխ. Ռուշիլա | 87 1/2 |
| Փոխանակագիր Փարիզի վրայ | 25 436 |

Փարիզ 26 փետր.

| | |
|---|---|
| Գաղղ. Քոնս. 3 0/0 | 76, 32 1/2 |
| » » 4 1/2 0/0 | 105·77 1/2 |
| Օսմ. Քոնս. | 8,75 |

Ֆր.

| | |
|---|---|
| Փոխ. 1865 | |
| » 1869 | 49 |
| » 1873 | 44, |
| Օսմ. Երկաթուղի | 41, 12 1/2 |
| Պանք Օթօման (գ. կ.) | 641,25 |
| Քրէտի Լիոնէ (գ. կ.) | 552,50 |
| Ռուս. փոխ. 5 առ 0/0 (1877) | 94 1/4 |
| » » Արեւելեան | |

Վիէննա 26 փետր.

| | |
|---|---|
| Փոխ. Լոնտրայի վրայ | 121,60 |
| Ռումելիի երկաթուղի | 19,70 |

ԿԷՍ ՕՐ 6, 6

Ֆրանսայէ և օտար երկիրներու ամեն հոտավաճառաց և լաբորատորաց քով։

La VELOUTINE

Poudre de Riz spéciale
PRÉPARÉE AU BISMUTH
Par CH^les FAY, Parfumeur
PARIS — 9, Rue de la Paix, 9 — PARIS